	կառավարմանը, հարկադիր միգրանտների զանգվածային ներհուքի ճգնաժամային կառավարմանը, հայրենադարձության խթանմանն ուղղված գործողությունների կատարման ապահովում	կառավարության որոշման վերջնական լրամշակված նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ:			
24	Հետընդունման (ռեադմիսիայի) գործընթացների արդյունավետ կազմակերպում	24.1 ՀՀ վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված ծրագրերի իրականացում	Յուրաքանչյուր տարի վերաինտեգրման աջակցության տրամադրում ՀՀ վերադարձող ՀՀ քաղաքացիների 38 ընտանիքների	Ներքին գործերի նախարարություն Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարություն Առողջապահության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)	2024-2026թթ	ՀՀ պետական բյուջե 13680.0 հազ. դրամ դրամաշնորհային միջոցներ

**Առողջապահության նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7

1	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մատչելիության և հասանելիության ապահովում	1.1 «Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Առողջության համապարփակ ապահովագրության հայեցակարգով առողջության համապարփակ ապահովագրության հիմնական սկզբունքների, ծառայությունների փաթեթների, ապահովագրության ներդրման միջոցառումների և դրանց ներդրման ժամկետների ամրագրում	Ֆինանսների նախարարություն  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե  Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		1.2 «Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումն ապահովող օրենսդրական դաշտի կարգավորում: Օրենսդրական հիմքերի ամրագրում, որի արդյունքում բժշկական օգնության և սպասարկման կարիք ունեցող ապահովագրված յուրաքանչյուր քաղաքացու, հաստատված փաթեթների շրջանակներում, առողջապահական ծառայություններից անվճար օգտվելու հնարավորություն կտրվի:		2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		1.3 Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի և դրա կառավարման խորհրդի ստեղծում, վերջինիս գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փաթեթի մշակում, առողջության համապարփակ ապահովագրության ներդրումն	Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումն ապահովելու նպատակով Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի հիմնադրում և դրա կառավարման խորհրդի՝ սահմանված կարգով ընտրություն, վերջինիս գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական		2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում  (2023-2025 թթ.-ի համար շուրջ

	ապահովող ենթաօրենսդրական ակտերի ընդունում	ակտերի փաթեթի ընդունում, որի միջոցով կիրականացվեն բժշկական ծառայությունների գործառույթները:			5.098.000.000 << դրամ)
	1.4 Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման ավտոմատացված համակարգի մշակում, հիմնական ծառայությունների փաթեթների գնահատում՝ ակտուարական հաշվարկների և կանխատեսումների միջոցով	Հիմնական բժշկական ծառայությունների փաթեթի գնահատման բժշկական ծառայությունների ներդրում, որի միջոցով ավտոմատ ռեժիմով կիրականացվեն կանխատեսումներ ֆինանսական ծախսերի, ծառայությունների հիմնական փաթեթում անհրաժեշտ ծառայությունների ներառման, տարբեր ռիսկերի վերաբերյալ:	-	2022-2023 թթ.	Տվյալ տարվա << պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում  (30.000.000 << դրամ)
	1.5 «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների միասնական մեթոդաբանությունը, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների կանոնակարգման հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգը, ինչպես նաև մշտադիտարկման և վերանայման կարգը, անհրաժեշտ տվյալների հավաքագրման ձևաչափերը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների միասնական մեթոդաբանության ներդրում, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների կանոնակարգման հանձնաժողովի ձևավորում և գործունեության կարգի ընդունում, ինչպես նաև մշտադիտարկման և վերանայման կարգերի ընդունում, անհրաժեշտ տվյալների հավաքագրման ձևաչափերի հաստատում, որի արդյունքում կկանոնակարգվեն տվյալների հավաքագրման ձևաչափերը, գների կանոնակարգման հանձնաժողովի ձևավորումը, որն իր դրական ազդեցությունը կունենա	-	2022 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Տվյալ տարվա << պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում (12.000.000 << դրամ)

			ծառայությունների շուկայի վրա, և այն կդառնա առավել կանխատեսելի բնակչության համար:			
		1.6 «Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգը և հիմնական ծառայությունների փաթեթում ընդգրկված ծառայությունների գները հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Առողջապահության նախարարության կողմից հաստատված տեխնիկական առաջադրանք, մշակված ծրագրային փաթեթ, բժշկական ծառայությունների հաշվարկված գների և բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գների հաշվարկման ավտոմատացված տեղեկատվական համակարգի ներդրում	-	2022թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում  (32.000.000 ՀՀ դրամ)
		1.7 «Բժշկական ծառայությունների գնման մրցակցային ընթացակարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման որակի հասանելիության և մատչելիության բարձրացում, ինչպես նաև ծառայությունների գների օպտիմալացում և ընդհանուր ծախսերի իջեցում: Արդյունքում մասնավոր ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր առողջապահական ծախսերում կնվազեցվի 40 տոկոսով:		2022թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
2	Սոցիալական նշանակության առավել տարածված վարակիչ հիվանդությունների դեմ պայքար	2.1 «Արտաընդերային վիրուսային հեպատիտների կանխարգելման և վերահսկման 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Հրամանով հաստատված արտաընդերային վիրուսային հեպատիտների դեմ պայքար. - վիրուսային հեպատիտ Ց-ով տարեկան առնվազն 1000 անձի ընդգրկում բուժման ծրագրում, անվճար դեղերի 100% տրամադրում, ապրելիության ցուցանիշների աճ՝ վաղ հայտնաբերման	-	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեի «1188. Դեղապահովում» ծրագրի «12001.Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական,

			դեպքում 96% առողջացում, իսկ ուշ հայտնաբերման դեպքում 75% բարելավում			հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառմամբ տարեկան շուրջ 100 միլիոն ՀՀ դրամ
		2.2 «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման միջոցառումների ծրագիր (2022-2026թթ.) հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով հիվանդների առնվազն 80%-ի հայտնաբերում - Հայտնաբերվածների առնվազն 90%-ի ընդգրկում բուժման ծրագրերում	-	2022թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
3	Չարորակ նորագոյացություններ ի դեմ պայքար	3.1 Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում, դեղի անվճար տրամադրում	Միջոցառումների իրականացման ավարտին չարորակ նորագոյացություններից մահացության ցուցանիշի նվազում 2,5%-ով, վաղ հայտնաբերման ցուցանիշի բարելավում՝ 5%-ով - 5 և 10 տարվա ապրելիության ցուցանիշների բարելավում՝ համապատասխանաբար 25%-ով և 10%- ով: 2023 թ.-ին չարորակ նորագոյացություններով պայմանավորված մահացություն (100 հազ. բնակչի հաշվով մահեր)՝ 178.4. 2024 թ.-ին չարորակ նորագոյացություններով պայմանավորված մահացություն (100 հազ. բնակչի հաշվով մահեր)՝ 177.2.	-	2021-2024 թթ.	ՀՀ պետական բյուջեի «1202. Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի «11004. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» միջոցառում  2023թ. 6,2 մլրդ դրամ

					Քիմիոթերապիայի ֆինանսավորման ավելացում՝ 1 կուրսը 300 000 ՀՀ դրամ հաշվարկով՝ տարեկան 3,6 մլրդ ՀՀ դրամ: Լրացուցիչ միջոցները կնախատեսվեն տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում
	3.2 2022 թվականից սկսած՝ ուռուցքաբանական, մասնավորապես, կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին նոր սերնդի, թանկարժեք «Տրաստուոլումաբ լուծույթ ե/մ ներարկման 600մգ/5մլ» դեղի տրամադրում	Դեղի անվճար տրամադրման շնորհիվ 2024-2026թթ-ի ընթացքում կբարելավվի շուրջ 728 պացիենտի կյանքի որակը, մասնավորապես՝ մահացության մակարդակի նվազում և ապրելիության, կյանքի տևողության մինչև 5 տարի երկարացում: 2023թ. ելնելով հատկացված ֆինանսական միջոցներից նախատեսվում է կրծքագեղձի քաղցկեղի ախտորոշմամբ 1-ից 3-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին շարունակական տրամադրել, նոր սերնդի, թանկարժեք հակաուռուցքային «Տրաստուոլումաբ» դեղով:	-	2022-2026թթ.	ՀՀ պետական բյուջեի «1188. Դեղապահովում» ծրագրի «12001.Դեղորայքի տրամադրում ամբուլատոր պոլիկլինիկական, հիվանդանոցային և բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառմամբ տարեկան նախատեսված է մոտ

			<p>ախտորոշմամբ 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտներին, նախատեսվում է անվճար տրամադրել «Տրաստուզումաբ» դեղով:</p>			<p>750,0 մլն դրամ կամ 1,500,000 ԱՄՆ-ի դոլար, որում ներառված է նաև 4-րդ փուլի HER դրական ենթատիպով պացիենտների համար նախատեսված դեղի արժեքը՝ 100 մլն դրամ նախատեսվում է որպես նոր նախաձեռնություն իրականացվելու է 2025 թվականից</p>
4	<p>Բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և հիվանդությունների ցանկերում ընդգրկված շահառուներին անվճար դեղերի շարունակական տրամադրում</p>	<p>4.1 «ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության որոշման ընդունում</p>	<p>Թվով 4 նոր հիվանդությունների և համախտանիշների ավելացում, ինչպես նաև արդեն իսկ ընդգրկված թվով 12 հիվանդությունների բուժման համար նախատեսված դեղերի ցանկի վերանայում, ընդլայնում և ձեռք բերվող քանակների ավելացում: Միջոցառման արդյունքում շուրջ 200000 շահառուի դեղապահովման մակարդակի բարձրացում մինչև 100%, իսկ թվով 4 նոր հիվանդությունների ավելացման շնորհիվ շուրջ 350 շահառուների, այդ թվում՝ երեխաների, նախկինում երբևէ պետության կողմից չտրամադրված դեղերով 100%-ով ապահովում:</p>	-	<p>2024թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի «1188. Դեղապահովում» ծրագրի «12001.Դեղորայքի տրամադրում ամբուլատոր պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառում, տարեկան 4,1 մլրդ</p>

			Արդյունքում ընդհանուր առմամբ շուրջ 200350 շահառուի 100%-ով դեղերով ապահովում, հիվանդությունների թվի, որոնց առկայության դեպքում դեղերը տրամադրվում են անվճար, ավելացում 12-ից 16, հիվանդանոցային բեռի թեթևացում, հիվանդության առաջընթացի կանխարգելման շնորհիվ հաշմանդամության և մահացության ցուցանիշների նվազում շուրջ 4 %-ով:			դրամ նախատեսվում է որպես նոր նախաձեռնություն և իրականացվելու է 2024 թվականից
		4.2 «Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի N 56-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Միջոցառման արդյունքում ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշման N 1 հավելվածով բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկում ընդգրկված 220.000 շահառուների դեղերով ապահովման մակարդակի 80% բարձրացում և պացիենտների կողմից դեղերին հատկացվող ֆինանսական բեռի թեթևացում:	-	2023 թ. մայիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
5	Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և վաղ հայտնաբերում	5.1 Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագրի ներդրում	Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգային ծրագրի ներդրման արդյունքում կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերելիության բարձրացում, մահացության ցուցանիշի իջեցում: Նշված միջոցառման նպատակն է կայունացնել և առնվազն 1,5%-ով նվազեցնել ԿԲ-ի հետևանքով առաջացող վաղաժամ մահացությունը: 2023թ.-ին իրականացված հետազոտությունների թիվ՝ 3700.	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2022-2026 թթ.	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում



		<p>2024թ.-ին իրականացված հետազոտությունների թիվ՝ 3900.</p> <p>2025թ.-ին իրականացված հետազոտությունների թիվ՝ 4000.</p> <p>2026թ.-ին իրականացված հետազոտությունների թիվ՝ 4100.</p>			
	<p>5.2 Շարունակել և ընդլայնել կանանց ընդգրկվածությունն արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում</p>	<p>Կանանց 30-60 տարիքային խմբի արգանդի պարանոցի քաղցկեղի՝ ՊԱՊ-քսուքի հետազոտություններում ընդգրկվածության ընդլայնում՝ շուրջ 5%-ով:</p> <p>2023թ. - ՊԱՊ-քսուքի հետազոտություններում կանանց ընդգրկվածության ընդլայնում՝ շուրջ 1%-ով:</p> <p>2024թ. - ՊԱՊ-քսուքի հետազոտություններում կանանց ընդգրկվածության ընդլայնում՝ շուրջ 1%-ով:</p> <p>2025թ. - ՊԱՊ-քսուքի հետազոտություններում կանանց ընդգրկվածության ընդլայնում՝ շուրջ 1%-ով:</p>	-	2021-2025 թթ.	<p>ՀՀ պետական բյուջեի «1099. Առողջության առաջնային պահպանում» ծրագրի «11001. Ամբուլատոր պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» Միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված միջոցներ</p> <p>ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
	<p>5.3 Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների տարածվածության հետազոտության իրականացում</p>	<p>Ոչ վարակիչ հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների տարածվածության մոնիթորինգային համակարգն ստեղծված է:</p>	-	2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ	<p>Այլ դոնորներ կամ ՀՀ ՄԺԾԾ 2023-2025թթ. շրջանակում</p> <p>58 մլն դրամ</p>
	<p>5.4 «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով</p>	<p>«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը</p>	Շուկայի վերահսկողության տեսչական մարմին	2022-2026թթ.	Պետական բյուջեով նախատեսված միջոցների

	առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով մշտադիտարկման աշխատանքների իրականացում	հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի դրույթների կիրարկման ուղղությամբ տարեկան առնվազն 1000 օբյեկտի մշտադիտարկում	Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին  Ոստիկանություն		շրջանակներում (1003 ծրագրի 11005 միջոցառում)
	5.5 Սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների իրականացում	Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ավարտին արյան շրջանառության համակարգի հիվանդություններից մահացության ցուցանիշի նվազում 5%-ով	-	2022-2023 թթ.	ՀՀ պետական բյուջեի «1202. Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրի «11005. Սրտի անհետաձգելի վիրահատություններ» (2023 թ. համար 1,65 մլրդ դրամ)
	5.6 Օրգանների և/կամ հյուսվածքների փոխպատվաստման ծառայությունների ընդլայնում	Փոխպատվաստումների ընդհանուր թվի ավելացում մինչև 200՝ 5 տարվա ընթացքում՝ տարեկան իրականացված մինչև 40 փոխպատվաստում	-	2022-2026 թթ.	ՀՀ պետական բյուջեի «1207. Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրի «11007. Փոխպատվաստման ծառայություններ» միջոցառմամբ 2023թ. 203,0 մլն դրամ Լրացուցիչ միջոցները կնախատեսվեն

					տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում
	5.7 Առողջ ապրելակերպի՝ ներառյալ առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, ծխախոտի օգտագործման, ծխախոտի ծխի վնասակար ազդեցության, ալկոհոլի չարաշահման վնասների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում (էլեկտրոնային հաղորդակցության, կրթական ծրագրերի իրականացման, ինչպես նաև տպագիր նյութերի տարածման միջոցով)	Առողջ ապրելակերպի և ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների վերաբերյալ տարեկան առնվազն 3 միջոցառման իրականացում:  Նշված միջոցառման նպատակն է կայունացնել և առնվազն 1,5%-ով նվազեցնել առավել տարածված թվով չորս ՈՎՀ-ի առաջացման ռիսկի գործոններին ենթարկվող անձանց թիվը	Շրջակա միջավայրի նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)  ՀՀ մարզպետների աշխատակազմեր  Միջազգային կազմակերպություններ (համաձայնությամբ)  Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2021-2026թթ.	Պետական բյուջեի «1003. Հանրային առողջության պահպանում» ծրագրի «11005. Առողջ ապրելակերպի խթանման և ծխելու դեմ պայքարի միջոցառումներ» միջոցառման շրջանակում տարեկան 100,0 մլն դրամ
	5.8 Մենդամթերքում հագեցած ճարպերի/ տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի քանակների սահմանափակմանն ուղղված միջազգային փորձի ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումների իրականացման	Մենդամթերքում հագեցած ճարպերի/ տրանսճարպերի, ազատ շաքարների և աղի քանակների վերաբերյալ սպառողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված կարգավորումների սահմանում՝ ներառյալ սննդամթերքում վե-	Էկոնոմիկայի նախարարություն	2024թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում

	առաջարկությունների ներկայացում	րոնշյալ բաղադրիչների առկայության և քանակների վերաբերյալ մակնշման կարգավորումը:			
	5.9 «Սննդային նյութերի պրոֆիլավորումը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի ընդունում	«Սննդային նյութերի պրոֆիլավորումը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հաստատած հրաման: Երեխաներին ուղղված սննդամթերքի գովազդի կարգավորման համար մշակված գործիքի առկայություն:	Էկոնոմիկայի նախարարություն  Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2022թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում
	5.10 Առողջ սնուցմանն ուղղված օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն, բացերի վերհանում և «Առողջ սնուցմանն ուղղված իրավական ակտերի փոփոխությունների առաջարկների ներկայացման ժամանակացույցը սահմանելու մասին» առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Առողջ սնուցմանն ուղղված օրենսդրական կարգավորումների իրականացման վերաբերյալ Առողջապահության նախարարի հրամանով հաստատված իրավական ակտերի փոփոխությունների առաջարկների ներկայացման ժամանակացույցի առկայություն	Էկոնոմիկայի նախարարություն	2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում
	5.11 Կրճքագեղձի քաղցկեղի կանխարգելման և վաղ հայտնաբերման սքրինինգային հետազոտությունների իրականացում ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության ռիսկային խմբերի շրջանում	Շուրջ 26.000 սքրինինգային հետազոտության իրականացում: Նշված միջոցառման նպատակն է կայունացնել և տարեկան առնվազն 1,5%-ով նվազեցնել կրճքագեղձի քաղցկեղի հետևանքով առաջացող վաղաժամ մահացությունը: 2023թ. համար իրականացված շուրջ 2000 հետազոտություն	-	2020թ. հունվարի 2-րդ տասնօրյակ - 2023թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման

						կատարելագործում» դրամաշնորհային ծրագիր (շուրջ 57,6 մլն ՀՀ դրամ)
6.	Բնակչության հոգեկան առողջության բարելավում, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն, հոգեկան առողջության պահպանման և բարելավման համակարգի զարգացում, բնակչության հոգեկան առողջության խնդիրների առաջացման կանխարգելում, հոգեկան առողջության երկարատև խնդիրներ ունեցող անձանց հոգեւոցիալական վերականգնում և սոցիալական ներգրավվածության ապահովում, կադրային ներուժի զարգացում	6.1 «Հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	2022-2026թթ. համար հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ցանկը մշակված է	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
7	«Ծխախոտի դեմ պայքարի Առողջապահության համաշխարհային կազմակերպության» շրջանակային	7.1 «Ծխախոտի դեմ պայքարի Առողջապահության համաշխարհային կազմակերպության» շրջանակային կոնվենցիայի	«Ծխախոտի դեմ պայքարի Առողջապահության համաշխարհային կազմակերպության» շրջանակային կոնվենցիայի «Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի	Արտաքին գործերի նախարարություն	2022թ. մայիսի 1-ին տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված

	կոնվենցիայի «Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը վերացնելու մասին» արձանագրության վավերացում	«Ծխախոտային արտադրատեսակների ապօրինի առևտուրը վերացնելու մասին» արձանագրության վավերացում ՀՀ Ազգային ժողովի կողմից	առևտուրը վերացնելու մասին» արձանագրությունը վավերացված է			հատկացումների շրջանակում
8	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում	8.1 «Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելմանն ուղղված միջոցառումների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունում	Հակամանրէային դեղերի նկատմամբ կայունության հսկողության և կանխարգելմանն ուղղված միջոցառումների միջոցառումների ծրագիրը մշակված է	Էկոնոմիկայի նախարարություն  Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Շրջակա միջավայրի նախարարություն  Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին  Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին	2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում
9	Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության մասնագիտությունների ցանկերի արդիականացում	9.1 «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերը հաստատելու և բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգի ներդրման համար օրենսդրական հիմքերի առկայություն	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2022թ. ապրիլի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		9.2 «Առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների և նեղ մասնագիտացումների ցանկերը սահմանելու մասին»	Համաշխարհային առողջապահական փորձի պահանջներին համահունչ՝ առողջապահության բնագավառի մասնագիտական գործունեության հիմնական մասնագիտությունների	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Տարածքային կառավարման և	2022թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված

		Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	և նեղ մասնագիտացումների արդիականացված և հստակեցված ցանկերը սահմանված են	ենթակառուցվածքների նախարարություն		հատկացումների շրջանակում
		9.3 «Բուժաշխատողների մասնագիտական բնութագրերը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Առողջապահության նախարարի հաստատած բուժաշխատողների մասնագիտական ընդհանուր նկարագրեր, որտեղ սահմանված են մասնագետի տեսական և գործնական գիտելիքները, աշխատանքային հմտությունները և ունակությունները, ինչպես նաև մասնագիտական իրավունքները, պարտականությունների և գործառույթների ծավալը	-	2024թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
10	Մայրական, վերարտադրողական առողջության, առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավում	10.1 «Վերարտադրողական առողջության բարելավման, պերինատալ կորուստների նվազեցման և առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման 2024-2026 թթ. ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունում	Առողջապահական գործոնով պայմանավորված ծնելիության բարելավման գործող ծրագրի ընթացքը և արդյունավետությունը գնահատված են, դրա հիման վրա պերինատալ կորուստների նվազեցմանն ու վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված նոր ծրագիրը մշակված է	-	2024թ. փետրվարի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		10.2 Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող ծառայությունների (աշխարհագրական և ֆինանսական) մատչելիության ապահովում	Առնվազն 3 մարզում ներառյալ սերմնավորման ծառայություն մատուցող կենտրոնները/կաբինետները ստեղծված են:  2023թ.՝ սերմնավորման կաբինետի իրավական հիմքերի ստեղծում (լիցենզավորման պահանջներ, մասնագետների վերապատրաստման ծրագիր), մարզերի ընտրություն:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  << մարզպետների աշխատակազմեր	2023-2026թթ.	Տվյալ տարվա << պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում (60 մլն դրամ՝ երեք կենտրոնի սարքավորումային հագեցվածությունն ապահովելու համար)

			2024-2026թ.՝ 1-ական կենտրոնի/կաբինետի ստեղծում			
		10.3 Մարզերում պրենատալ օրնախորհրդման ծառայությունների ուժեղացում	Առնվազն 2 մարզում պտղի ուլտրաձայնային օրնախորհրդման համար ժամանակակից սարքավորումների ձեռքբերում, բուժանձնակազմի ուսուցում: Միջոցառման իրականացման արդյունքում շահառու մարզերում 2023-2024թ.՝ կատեղծվի տարեկան 1 պրենատալ օրնախորհրդման ծառայություն: 2025թ. գործող օրնախորհրդման ծառայության միջոցով հայտնաբերված հղիների 90%-ը ուղղորդվել են պրենատալ կոնսիլիում իրականացնող բժշկական կազմակերպություններ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  ՀՀ մարզպետների աշխատակազմեր  Միջազգային դոնոր կազմակերպություններ	2023-2025թթ.	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում  ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
11	Մայրական առողջության բարելավում	11.1 Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի միտման պատճառների հետազոտության իրականացում	Հետազոտության արդյունքներն ամփոփված են, կեսարյան հատումների աճի միտման հիմնական պատճառները վերհանված են	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ)	2022-2023 թթ.	Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում
		11.2 «Հայաստանի Հանրապետությունում կեսարյան հատումների աճի դադարեցմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Հանրապետությունում կեսարյան հատումների աճի պատճառները վերլուծված են, վերջիններիս ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումները՝ սահմանված: Միջոցառման իրականացման արդյունքում հաստատված կլինի կեսարյան հատումների աճի դադարեցմանն ու նվազեցմանն ուղղված համալիր ծրագիր:	-	2023թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		11.3 Երևանի ծննդօգնության 3-րդ մակարդակի բժշկական	2023թ.՝ առողջապահության նախարարի հրամանը	-	2023-2026թթ.	Տվյալ տարվա ՀՀ պետական



		կազմակերպությունների կողմից ծննդագնություն իրականացնող մարզային բժշկական կազմակերպություններին մեթոդական աջակցության ցուցաբերում	ընդունված է, սահմանված միջոցառումների մեկնարկը տրված է: Սկսված 2024թ.-ից մայրական մահացության նվազեցում 18%-ով (տարեկան 6 %-ով):			բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում  ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
12	Երեխաների առողջական ցուցանիշների բարելավում, զարգացման բնածին խանգարումների վաղ հայտնաբերում ու շտկում, հաշմանդամության ու մահացության կանխարգելում	12.1 Ադրենոգենիտալ համախտանիշի նորածնային սկրինինգային ծրագրի ներդրում	Բոլոր նորածինների մոտ 170H պրոգեստերոնի որոշում, մինչ-կլինիկական շրջանում ադրենոգենիտալ համախտանիշով երեխաների հայտնաբերում և հորմոնային բուժման կազմակերպում, որի արդյունքում նաև կբացահայտվի տվյալ համախտանիշի տարածվածությունը մեր պոպուլյացիայում: Սկրինինգին հաջորդող տարիների ընթացքում ակնկալվում է նշված հիվանդացությամբ պայմանավորված ռեանիմացիոն բուժում պահանջող և մահվան դեպքերի նվազեցում	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  ՀՀ մարզպետարաններ  Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2023թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջեի «1200. Մոր և մանկան առողջության պահպանում» ծրագրի «11007. Բնածին հիպոթիրեոզի, ֆենիլկետոնուրիայի, լսողության և տեսողության (անհասների ռետինոպաթիա) խանգարումների, կոնքազդրային հոդի խախտման վաղ հայտնաբերման նպատակով նորածնային սքրինինգների անցկացում» միջոցառմամբ տարեկան հատկացվում է 414,2 մլն դրամ
		12.2 Մարզային բժշկական կազմակերպություններում երեխաների ինտենսիվ թերապիայի ծառայությունների բուժանձնակազմի գիտելիքների և մատուցվող	Հանրապետության բոլոր մարզերում երեխաներին ինտենսիվ բուժօգնություն մատուցող ծառայությունների գնահատում, ըստ անհրաժեշտության վերազինում, երեխաների ինտենսիվ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (համաձայնությամբ)	2022-2024թթ.	Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում

		<p>ծառայությունների որակի բարձրացում</p>	<p>թերապիայի ենթակա տարածված վիճակների ալգորիթմերի մշակում, տպագրում և բաշխում, մարզերի բժշկական կենտրոններում, մանկական ինտենսիվ թերապիայի թեմայով արտագնա ուսուցման կազմակերպում: 2023թ. հաստատված և տպագրված 10 ալգորիթմ: 2024թ. մարզի մասնագետների գիտելիքների բարելավում 50%-ով:</p> <p>Միջոցառման իրականացման արդյունքում կապահովվի մարզերում մինչև 1 տարեկան երեխաների մահացության նվազում 15 տոկոսով:</p>			
	<p>12.3 Հայաստանի Հանրապետությունում մանկական պալիատիվ արտահիվանդանոցային պիլոտային ծառայության ստեղծում՝ Երևանի և մոտակա մարզերի շահառուների համար</p>	<p>Մոբիլ բժշկական բրիգադի միջոցով պալիատիվ ծառայության տրամադրում կյանքի վերջին փուլում գտնվող և / կամ կյանքի որակն էապես սահմանափակող հիվանդություններ ունեցող երեխաներին՝ տնային պայմաններում՝ էապես բարելավելով նրանց կյանքի որակը</p>	<p>-</p>	<p>2022-2023 թթ.</p>	<p>Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում (Տարեկան 30 մլն ՀՀ դրամ)</p>	<p>Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում</p>
	<p>12.4 Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում մատուցվող ծառայությունների, հղիների, երեխաների խնամքի, առավել տարածված հիվանդությունների և վիճակների վերաբերյալ տեղեկատվական/խորհրդատվական ինտերնետային հարթակի ստեղծում, գործարկում, պահպանում և պարբերաբար թարմացում</p>	<p>Մոր և մանկան առողջության պահպանման ոլորտում հասանելի ծառայությունների մասին իրազեկում, հղիների, երեխաների խնամքի և հաճախ հանդիպող հիվանդությունների և վիճակների վերաբերյալ իրազեկում, ճիշտ ուղղորդում, ինչի արդյունքում նրանք կստանան բավարար գիտելիք՝ երեխայի վիճակը ճիշտ գնահատելու և մինչև հիվանդանոցային փուլում ճիշտ</p>	<p>ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>Հայկական ակնաբուժության նախագիծ ԲՀ (համաձայնությամբ)</p>	<p>2021-2024 թթ.</p>	<p>Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում</p>	<p>Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում</p>

			գործելակերպ կիրառելու վերաբերյալ: Մայրերի/խնամողների գիտելիքների բարձրացման նպատակով կայքի պարբերաբար թարմացում:			
13	Դեռահասներին մատուցվող ծառայությունների ներդրում ԱԱՊ համակարգում	13.1 Դպրոցահասակ երեխաներին, դեռահասներին մատուցվող առողջապահական ծառայությունների փաստառձեռն և ծախսարդյունավետ մոդելի մշակում	Առաջարկների ներկայացում՝ գործող ԱԱՊ համակարգում դեռահասային ծառայության ինտեգրման վերաբերյալ՝ քաղաքային և գյուղական մակարդակներում, դերակատարների և դեռահասային ծառայություն մատուցող բուժանձնակազմի՝ իրենց աշխատանքի նկարագրի հստակեցում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ)	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Միջազգային կազմակերպությունների կողմից նպատակային ֆինանսավորում
		13.2 «Առողջության առաջնային պահպանման բժշկական կազմակերպություններում և հանրակրթական ուսումնական հաստատություններում դպրոցահասակ երեխաների և դեռահասների բժշկական օգնության և սպասարկման կարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	Գործող ԱԱՊ համակարգում դեռահասային ծառայության ինտեգրման վերաբերյալ ներկայացված առաջարկների հիման վրա դպրոցահասակ երեխաների և դեռահասների սպասարկման կարգը մշակված է. դեռահասային ծառայության ներդրման համար նախադրյալների ստեղծում	-	2023թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
14	Էլեկտրոնային առողջապահության արդիականացում	14.1 Առողջապահության նախարարի 2020 թվականի փետրվարի 16-ի N 456-Լ հրամանով հաստատված միջոցառումների իրականացում. 1. Էլեկտրոնային ուղեգրի, դեղատոմսի, անաշխատունակության թերթիկի մոդուլի մշակում և ներդրում:	Էլեկտրոնային առողջապահության համակարգում համակարգի մաս կազմող մոդուլները մշակված են, և համակարգը ներդրված է: Համակարգին միացված լիցենզավորված բժշկական և դեղատնային գործունեություն իրականացնող կազմակերպությունների թվի ավելացում 5 անգամ:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2024թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

		<p>2. Հիվանդությունների ռեգիստրների մոդուլի մշակում և ներդնում:</p> <p>3. Բժշկական փաստաթղթերի, հաշվետվությունների և մատյանների թվայնացում:</p> <p>4. Պացիենտի էջի իրազեկման աշխատանքներ:</p>				
15	Արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում առողջապահական համակարգի անխափան գործունեության ապահովում	15.1 Առողջապահության նախարարության և Պաշտպանության նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայում	Խաղաղ ժամանակ ճշգրտված են փոխհամագործակցության մեխանիզմներն ու պլանները: Ռազմական դրության պայմաններում առողջապահական համակարգը փոխհամագործակցում է ներդաշնակված: Ռազմական դրության պայմաններում առկա են արագ արձագանքման ճկուն մեխանիզմներ, մոբիլիզացիոն ռեսուրսների ծավալման գործուն համակարգեր:	Պաշտպանության նախարարություն	2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		15.2 Առողջապահության նախարարության և Արտակարգ իրավիճակների նախարարության փոխհամագործակցության մեխանիզմների և պլանների վերանայում	Ճշգրտված են փոխհամագործակցության հարցերը, ուղղությունները, մեխանիզմներն ու առկա է մշակված և հաստատված պլան: Արտակարգ իրավիճակներում առողջապահական համակարգը փոխհամագործակցում է ներդաշնակված: Արտակարգ իրավիճակներում առկա են արագ արձագանքման ճկուն մեխանիզմներ, ռեզերվային նյութատեխնիկական ռեսուրսների, մասնագիտական ներուժի, անհրաժեշտ կարողությունների և հնարավորությունների ներդրման գործուն համակարգեր:	<p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p>	2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

16	Հայաստանի Հանրապետության և Վրաստանի առողջապահության համակարգում միջսահմանային համագործակցության բարելավում	16.1 Արագ արձագանքման բժշկական թիմի (ԱԱԲԹ) ստեղծում և միջազգային հավաստագրում	Հայաստանում ստեղծված է արագ արձագանքման բժշկական թիմ (ԱԱԲԹ), որն անցել է համապատասխան վերապատրաստում, մասնակցել է միջազգային շտաբային և դաշտային վարժանքների և հավաստագրվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից	Արտակարգ իրավիճակների նախարարություն	2021թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ - 2023թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Եվրոպական բնակչության պաշտպանության և հումանիտար օգնության գործառնությունների գլխավոր տնօրինություն (DG ECHO)
17	Վարակիչ հիվանդությունների կանխարգելում	17.1 «Ազգային լաբորատոր համակարգի զարգացման ռազմավարության և դրանից բխող 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Ազգային լաբորատոր համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2022-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատված է, առաջիկա 5 տարվա հիմնական առաջնահերթությունները, նպատակները, դրանց հասնելու հիմնական գործողություններն ամրագրված են: Առողջապահական ոլորտում գիտական հետազոտությունների իրականացման զարգացում և արդյունքների գործնականում ներդրում:	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Արդարադատության նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Ազգային անվտանգության ծառայություն</p> <p>Ոստիկանություն</p>	2022 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		17.2 Խմելու ջրի որակին վերաբերող նորմերի փոփոխության նախագծի մշակում	Բնակչությանը մատակարարվող խմելու ջրի ԵՄ ստանդարտներին համապատասխան որակի պահանջները սահմանող նախարարի հրամանը հաստատված է	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Ջրային կոմիտե</p>	2023թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

				«Վեոլիա Ջուր» ՓԲԸ (համաձայնությամբ)		
		17.3 «ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 17-ի N 22-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» վարչապետի որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների կիրառման հարցերով, վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի, համընդհանուր լաբորատոր ցանցի գործողությունները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմի և աշխատակարգի համապատասխանեցում արդի պայմաններին	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  Արտակարգ իրավիճակների նախարարություն  Արդարադատության նախարարություն  Արտաքին գործերի նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Շրջակա միջավայրի նախարարություն  Պաշտպանության նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Ֆինանսների նախարարություն	2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

				<p>Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>		
		<p>17.4 ՀՀ Կառավարության 17.12.2020թ. N 2129-Ն որոշմամբ հաստատված 2021-2025 թվականների ինունական-խարգելման ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ապահովում</p>	<p>1 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը՝ 95% և ավելի</p> <p>1 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը 2023 թվականին՝ 92%, 2024 թվականին՝ 93.5%, 2025 թվականին՝ 95% և ավելի:</p> <p>2 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը՝ 90% և ավելի</p> <p>2 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը 2023 թվականին՝ 90%, 2024 թվականին՝ 90%, 2025 թվականին՝ 90% և ավելի</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>	2022-2025 թթ.	<p>Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում</p> <p>(տարեկան 3 մլրդ 700 մլն ՀՀ դրամ)</p>

			<p>6 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը՝ 90% և ավելի</p> <p>6 տարեկան երեխաների պատվաստումներում ամբողջական ընդգրկվածությունը 2023 թվականին՝ 90%, 2024 թվականին՝ 90%, 2025 թվականին՝ 90% և ավելի</p> <p>Ձորակոչի ենթակա անձանց պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 95% և ավելի:</p> <p>Ձորակոչի ենթակա անձանց պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 2023 թվականին՝ 95%, 2024 թվականին՝ 95%, 2025 թվականին՝ 95%, և ավելի</p> <p>Կարմրուկի, դիֆթերիայի և պոլիոմիելիտի դեպքերի գրոյական ցուցանիշի գրանցում: Կարմրուկի, դիֆթերիայի և պոլիոմիելիտի տեղական դեպքեր՝ 2023 թվականին՝ 0, 2024 թվականին՝ 0, 2025 թվականին՝ 0:</p>			
	<p>17.5 Նոր պատվաստումների ներդրում՝ ըստ անհրաժեշտության, պատվաստումների նկատմամբ պահանջարկի բարձրացում</p>	<p>18 տարեկան և բարձր տարիքի բնակչության Կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 70% և ավելի: 2023 թվականին՝ 70%, Կառավարելի վարակիչ հիվանդություններով, այդ թվում՝ ջրծաղկի և</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p>	<p>2022-2023թթ.</p>		<p>ՀՀ պետական բյուջեի «1003. Հանրային առողջության պահպանում» ծրագրի «11002. Իմունականխարգելման ազգային ծրագիր»</p>



			<p>Կորոնավիրուսային հիվանդության հիվանդացության նվազեցում, դրանց հետևանքով մահվան դեպքերի կանխարգելում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալության ապահովում: Կորոնավիրուսային հիվանդության դեմ ռիսկի խմբերի անձանց շրջանում պատվաստումներում ընդգրկվածություն.</p> <p>2024 թվականին՝ 5 %, 2025 թվականին՝ 8%:</p> <p>Զրծադիկի դեմ թիրախային խմբերի անձանց շրջանում պատվաստումներում ընդգրկվածություն.</p> <p>2024 թվականին՝ 10%, 2025 թվականին՝ 50%:</p>	<p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմիններ</p>	2024-2025 թթ.	միջոցառմամբ 2023թ. 3,7 մլրդ դրամ
18	Կորոնավիրուսային հիվանդության համավարակի կանխարգելում և արձագանքում	18.1 Կորոնավիրուսային հիվանդության կասկածելի դեպքերի թեստավորում՝ դեպքերի վաղ հայտնաբերում	Դեպքի ստանդարտ բնորոշմանը համապատասխան դեպքերի թեստավորումն ապահովված է	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Առնվազն 600.000 թեստի իրականացում՝ 3.000.000.000 ՀՀ դրամ

				<p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>		
	18.2 Կորոնավիրուսային հիվանդության դեպքերի համաճարակաբանական հետազոտություն	Կորոնավիրուսային հիվանդության դեպքերի տնային և կազմակերպ օջախներում համաճարակաբանական հետազոտությունների իրականացման, ռիսկերի բացահայտման հիման վրա մշակված և շահագրգիռ գերատեսչություններին ներկայացված կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումներ	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p>	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	<p>Առնվազն 159.738 դեպքի հետազոտություն 275.548.050 ՀՀ դրամ</p> <p>Առնվազն 25644 կազմակերպ օջախի հետազոտություն 115.167.204 ՀՀ դրամ</p> <p>Ընդամենը՝ 275.707.788 ՀՀ դրամ</p>	

				<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>		
	18.3 Իրավական ակտերի լրամշակում, նոր իրավական ակտերի մշակում՝ ԱՀԿ-ի նոր մոտեցումների հիման վրա	Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները կանոնակարգող իրավական ակտերը համապատասխանում են ԱՀԿ-ի նոր մոտեցումներին	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p>	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում	

			<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>		
	18.4 Կորոնավիրուսային հիվանդության դեպքերի բուժում	Ըստ անհրաժեշտության՝ երևանյան և մարզային բժշկական կազմակերպությունների վերապրոֆիլավորում կորոնավիրուսային հիվանդության ախտորոշմամբ	-	2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում

			<p>հիվանդների ընդունման և բուժման համար, ըստ անհրաժեշտության վերապրոֆիլավորված բժշկական կազմակերպությունների արդիականացում՝ շենքային պայմանների բարելավում և հագեցում</p>			
		<p>18.5 Բնակչության իրազեկում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ</p>	<p>Բնակչությունն իրազեկված է Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ</p>	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

				<p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>		
19	<p>Հանրության (մարդու) առողջության պահպանում՝ առողջության պաշտպանություն և խթանում, հիվանդությունների կանխարգելում</p>	<p>19.1 «Հանրային առողջապահության մասին» ՀՀ օրենքի նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>«Հանրային առողջապահության մասին» օրենքի նախագծի առկայություն, ինչը կսահմանի հանրային առողջության պահպանման հետ կապված հասարակական հարաբերությունները և հանրային առողջության պահպանման պետական քաղաքականության սկզբունքները, հանրային առողջության պահպանման բնագավառում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը, իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, հանրային առողջության պահպանման կազմակերպական, տնտեսական և իրավական հիմքերը:</p>	<p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Արտաքին գործերի նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2022 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

			<p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p> <p>ՎԱ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>		
	<p>19.2 «Հանրային առողջապահության անվտանգության ազգային գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման ընդունում</p>	<p>Հանրային առողջապահության անվտանգությանն ուղղված քայլերի իրականացման օրենսդրական իրավական հիմքերը սահմանված են, ապահովված է Հայաստանի Հանրապետությունում Միջազգային առողջապահական կանոնների ներդրման կայունությունը և պահանջվող կարողությունների շարունակական զարգացումը</p>	<p>Արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p>	<p>2024թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

				<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե</p> <p>Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p> <p>Ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ ոստիկանություն</p>		
	<p>19.3 Շրջակա միջավայրի հետազոտությունների և ազգաբնակչության հիվանդացության միջոցով ռիսկերի բացահայտում, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթի մշակում</p>	<p>Շրջակա միջավայրի և ազգաբնակչության հիվանդացության հետազոտությունների միջոցով բացահայտվել են հանքարդյունաբերական և մետաղաձուլման, ինչպես նաև այլ արտադրական արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության ազդեցությամբ պայմանավորված ռիսկերը, առկա է կանխարգելիչ</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2022-2023 թթ.</p>	<p>Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում</p> <p>Յուրաքանչյուր տարի հողի, ջրի, սննդամթերքի 4104 նմուշի հետազոտություն՝ ընդամենը</p>	



			միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ			Երկու տարվա՝ համար 94.000.000 դրամ
20	Ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին առողջապահության համակարգի արագ և արդյունավետ արձագանքման ապահովում	20.1 Առողջապահության համակարգի՝ ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին արձագանքման պատրաստվածության գնահատում	Գնահատված կարիքների հիման վրա ինֆեկցիոն հիվանդությունների բռնկումներին և համավարակներին արագ արձագանքմանն ուղղված ռեսուրսները մոբիլիզացված են	-	2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհային ծրագիր, կանխատեսվող արժեքը՝ 21,410 ԱՄՆ-ի դոլար
21	Բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավում	21.1 «Առողջապահական ծառայությունների որակի բարելավման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի հրամանի ընդունում	«Առողջապահական ծառայությունների որակի բարելավման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը մշակված են	-	2022թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		21.2 Կլինիկական ուղեցույցների, պացիենտի վարման գործելակարգերի և այլ փաստաթղթերի մշակում և ներդրում	Ուղեցույցների, գործելակարգերի, հաշվառման ձևերի և այլ փաստաթղթերի մշակման ծառայությունների իրականացում: 2023-2025 թվականների համար ուղեցույցների, գործելակարգերի և այլ փաստաթղթերի մշակման աշխատանքներ՝ տարեկան 25 հատ	-	2022թ. հունվարի 2-րդ տասնօրյակ - 2025թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ (պարբերաբար)	Տվյալ միջոցառմանը հատկացված միջոցների հաշվին՝ 30.0 մլն դրամ
22	Բնակչության բժշկական օգնության և սպասարկման որակի բարձրացում, արդյունքային ցուցանիշների ամրագրում	22.1 Մինչև 2026 թվականն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի և նեղ մասնագետների աշխատավարձերի ավելացում՝ 50 %-ով	Օրենսդրական հիմքերի ամրագրում, որի արդյունքում առողջության առաջնային պահպանման ծառայությունների մարդաշնչով իրականացվող ֆինանսավորումը կկատարվի տարբերակված սկզբունքով՝ ըստ հավաքագրված	-	2021-2026թթ.	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում

			բնակչության տարիքաստեռային կազմի և հաշմանդամություն ունեցող անձանց տեսակարար կշռի: ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկի վարձատրությունը կիրականացվի երկու բաղադրիչով՝ հավաքագրված բնակչության թվաքանակի և կատարած աշխատանքի ցուցանիշների հիման վրա՝ միջինում տարեկան՝ սկսված 2023 թվականից, կանխատեսվող ավելացման 25%-ի չափով:			2022-2026 թվականից սկսած յուրաքանչյուր տարի ԱԱՊ օղակի ֆինանսավորում ն անհրաժեշտ է ավելացնել շուրջ 2.0 մլրդ. դրամ
23	Առողջապահական ոլորտի մարդկային ներուժի և որակի կառավարում	23.1 «Առողջապահության համակարգի մարդկային ներուժի զարգացման 2022-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագիծը Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Առողջապահության ոլորտի մարդկային ներուժի պատրաստման, արդյունավետ պլանավորման և կառավարման միջոցով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին բարձրագույն և հետբուհական ու միջին մասնագիտական կրթությամբ որակյալ մասնագետներով ապահովում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		23.2 Բուժաշխատողների լիցենզավորման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի փաթեթի մշակում և ընդունում	ՀՀ-ում բուժաշխատողների անհատական լիցենզավորման համակարգի ներդրմանն ուղղված անհրաժեշտ օրենսդրական բազայի ստեղծում	-	2024թ. փետրվարի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		23.3 Կլինիկական ռեզիդենտուրայի ներդրման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի ընդունում և պիլոտային ծրագրի իրականացում	Կլինիկական ռեզիդենտուրայի ներդրում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2022 թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ  Ծրագրի պիլոտային փուլի մեկնարկ՝ 2024թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով ոլորտի գծով նախատեսված հատկացումների շրջանակում

	<p>6.11 «Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում</p>	<p>Օրենքի ընդունմամբ սահմանվելու է երկրում կլիմայական քաղաքականության մշակման ու իրականացման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ, մասնավորապես՝ կլիմայական նպատակների հստակ սահմանում և կլիմայական նկատառումների ներկառուցում ոլորտային զարգացման քաղաքականություններում, իրավասությունների և պարտականությունների սահմանում, նորարարական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, ջերմոցային գազերի արտանետումների, ստացված</p>	-	2025թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	<p>Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ)</p>

			աջակցության և քաղաքականության իրականացման արդյունքների հաշվառման ինստիտուցիոնալ համակարգ:			
7	Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.	7.1 «Քիմիական նյութերի մասին» օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում	«Քիմիական նյութերի մասին» օրենքի ընդունումը կապահովի քիմիական նյութերի անվտանգ գործածության իրավական հենքը	Առողջապահության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Պաշտպանության նախարարություն	2026թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		7.2 «ՀՀ «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման գործողությունների ազգային ծրագրի 2022-2026 թվականներին իրականացվելիք միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայից բխող միջոցառումների իրականացումը կնպաստի կայուն օրգանական աղտոտիչների անբարենապաստ ազդեցության նվազեցմանը, արտանետումների կրճատմանը և թափոնների էկոլոգիապես անվտանգ ոչնչացմանը	Առողջապահության նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Պաշտպանության նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Տարաքծային կառավարման և ենթակառուցվածքներ ի նախարարություն	2022 թ. հունիսի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		7.3 Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռետտորի ձևավորում	Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում օգտագործվող քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և «Հայաստանի	Առողջապահության նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն	2021-2026թթ.	2021-2022թթ.՝ Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

			<p>Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի» ձևավորման նպատակով նախապատրաստական աշխատանքներ:</p> <p>- Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում օգտագործվող քիմիական նյութերի վերաբերյալ տվյալների թարմացում, հավաքագրված տվյալների մշակում</p> <p>- Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի ռեեստրի ազգային (ներպետական) մասի ձևավորման նախապատրաստական աշխատանքներ:</p> <p>-Քիմիական նյութերի ռեեստրի ազգային մասի ձևավորում՝ ԵՏՀ համապատասխան ստորաբաժանմանը փոխանցելու նպատակով:</p> <p>-Քիմիական նյութերի ռեեստրի ազգային մասի փոխանցում ԵՏՀ համապատասխան ստորաբաժանմանը՝ ընդհանուր քիմիական նյութերի վերաբերյալ միասնական ռեեստր ձևավորելու նպատակով:</p>	<p>Պետական եկամուտների կոմիտե</p>	<p>2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2025թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ</p> <p>2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>2023թ.՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվում</p> <p>2024թ.՝ Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ) 19440.0 հազ.դրամ</p> <p>2025թ.՝ Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ) 5000.0 հազ.դրամ</p> <p>2026թ.՝ Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ) 5000.0 հազ.դրամ</p>
--	--	--	---	-----------------------------------	---	--

		7.4 «Վտանգավոր քիմիական նյութերի արտահանման և ներմուծման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում	Կառավարության որոշման ընդունմամբ կկանոնակարգվեն քիմիական նյութերի արտահանման և ներմուծման գործընթացները, մարդկանց առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով կսահմանվեն լրացուցիչ պահանջներ, կապահովվի քիմիական նյութերի վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը	Էկոնոմիկայի նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2026թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
8	Թափոնների (այդ թվում՝ ընդերքօգտագործման), կառավարման համակարգի կատարելագործումը.	8.1 «Սնդիկի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունում	«Սնդիկի մասին» ՀՀ օրենքի և օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման արդյունքում կստեղծվի սնդիկի կարգավորման իրավական հենք, ինչը կնպաստի սնդիկի էկոլոգիապես անվտանգ գործածությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանմանը սնդիկի, սնդիկի միացությունների և սնդիկային թափոնների վնասակար ազդեցությունից	Առողջապահության նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Պետական եկամուտների կոմիտե	2021-2022թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

		<p>8.2 «Աղբավայրերի շահագործման ընթացքում հսկողության և մոնիթորինգի ընթացակարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Աղբավայրերում և դրանց ազդեցության գոտում սահմանված կարգով հսկողություն և մոնիթորինգ իրականացվելու է մարդկանց առողջության և շրջակա միջավայրի վրա թափոնների ներգործության բացասական հետևանքների կանխատեսման, բացահայտման, կանխարգելման կամ նվազեցման համար անհրաժեշտ տվյալները հավաքագրելու, մշակելու և գնահատելու նպատակով</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Առողջապահության նախարարություն</p>	<p>2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>
		<p>8.3 «Պոլիքլորացված բիֆենիլների գործածության տեխնիկական պայմանները հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Կառավարության որոշման ընդունմամբ կապահովվի «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարումը</p>	<p>Առողջապահության նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>
9	<p>Ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների և ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների լքված, տիրազուրկ տեղամասերի ռեկուլտիվացիայի իրականացումը.</p>	<p>9.1 Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում</p>	<p>Ընդերքօգտագործման թափոնների ծավալների կրճատում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազեցում/չեզոքացում, վերականգնված հողատարածքների վերադարձ տնտեսական շրջանառության մեջ:</p>	-	2022-2024թթ.	<p>&lt;&lt; պետական բյուջե,</p> <p>Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ) շուրջ 137900,0 հազ. դրամ</p>

			- Նազիկ և Փխրուտ փակված պոչամբարների ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի 2 փաթեթ		2023թ. դեկտեմբերի 3-րդ	2023թ.' ՀՀ պետական բյուջե 137900,0 հազ.դրամ
			-Արտադրական լցակույտերի տեղամասերի և փակված պոչամբարների տարածքների հստակեցում, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ համաձայնեցում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ		2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	2024թ.' լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
10	Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը.	10.1 Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում	- ՀՀ տարածքին համարժեք, միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային ինֆորմացիա արտադրող մոնիթորինգային համակարգի առկայություն,  - ՀՀ բնակլիմայական պայմաններին և հողային շերտի աղտոտվածության որակական բաշխման առանձնահատկություններին համապատասխան քարտեզների առկայություն	Կադաստրի կոմիտե	2022-2026թթ.	Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ)  շուրջ 100300,0 հազ. դրամ:
			Ուսումնասիրության ենթակա օբյեկտի/մոնիթորինգային հարթակի առկայություն -16		2023թ. դեկտեմբերի 3-րդ	2023 թ.' 34886,4 հազ.դրամ

			Ուսումնասիրության ենթակա օբյեկտի /մոնիթորինգային հարթակի առկայություն - 22		2024թ. դեկտեմբերի 3-րդ	2024թ.` 47968,8 հազ.դրամ
			Ուսումնասիրության ենթակա օբյեկտի/ մոնիթորինգային հարթակի առկայություն – 8		2025թ. դեկտեմբերի 3-րդ	2025թ.` 17443,2 հազ.դրամ
			Կատարված աշխատանքի ամփոփում, հաշվեվության կազմում		2026թ. դեկտեմբերի 3-րդ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
11	Մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը.	11.1 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Օրենքի ընդունմամբ կամրագրվեն մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից մոտեցումները: Արդյունքում կձևավորվի օդի որակի գնահատման նոր չափանիշների մշակման, արտանետումների սահմանափակումը նոր տեխնոլոգիաների ներդրման իրականացման, արտանետումների հաշվառման միասնական համակարգի ստեղծման համար օրենսդրական հենքը	-	2022 թ. մարտի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		11.2 Վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (շարժական և անշարժ աղբյուրներ) միասնական հաշվառման համակարգի ստեղծման համար նախադրյալների հիմնում	Արտանետումների հաշվառման գործընթացի նախադրյալների ստեղծում	Առողջապահության նախարարություն  Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	2025թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ)



12	<p>Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատման և սահմանափակման ապահովումը.</p>	<p>12.1 «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը          Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ որոշման ընդունում</p>	<p>Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերում մեկանգամյա օգտագործման պլաստիկ իրերի որոշակի թիրախային խմբի վաճառքի (իրացման) արգելքի սահմանում</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2024թ.          նոյեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>
13	<p>Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը, թույլտվությունների, լիցենզիաների միասնական և ժամանակակից համակարգերի ներդրումը, առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության համակարգի բարելավումը՝ հիմնված կանխարգելման սկզբունքի վրա, փորձաքննության որակի բարձրացմանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրումը</p>	<p>13.1 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը          Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Օրենսդրության համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների պահանջներին:</p> <p>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին:</p> <p>Օրենքում կներառվի Ձեռնարկողի նախաձեռնությամբ փորձաքննության իրականացման հնարավորությունը, կառանձնացվի ռազմավարական էկոլոգիական գնահատումը, կամրագրվեն դրանց ենթակա լինելու մեխանիզմները, ամբողջովին նոր խմբագրմամբ կներկայացվի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման» հոդվածը և այլն:</p>	<p>--</p>	<p>2022թ.          մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

	<p>13.2 «Բազմավարական էկոլոգիական գնահատման իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Օրենսդրության համապատասխանեցում ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների պահանջներին</p>	-	2022թ. հունիսի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
	<p>13.3 «Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման ուղեցույցը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման գործընթացների իրավական հիմքերի առկայություն</p>	<p>Առողջապահության նախարարություն</p> <p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	2022թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
	<p>13.4 Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության ) և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտացանցերի արդիականացում</p>	<p>Յուրաքանչյուր տարի՝</p> <p>- շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի դիտարկումների, դիտակայանների և դիտացանցերի արդի տեխնոլոգիաներով հագեցվածության ապահովում</p>	-	2023 - 2026թթ.	<p>ՀՀ պետական բյուջե՝ 300000,0 հազ.դրամ</p> <p>Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ)</p> <p>շուրջ 725,000.0 հազ.դրամ</p> <p>2024թ.՝ 300000,0 հազ.դրամ</p>

		<p>13.5 Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիայի կարողությունների զարգացում</p>	<p>- Շրջակա միջավայրի մոնիթորինգի լաբորատորիայի սարքավորումների ձեռքբերում, միջազգային ստանդարտ մեթոդների ներդրում, լաբորատորիայի հավատարմագրման հայտի փաստաթղթերի նախապատրաստում</p> <p>- Միջազգային ստանդարտ պահանջներին համաձայն լաբորատորիայի հավատարմագրում</p> <p>- Լաբորատորիայի ժամանակակից սարքավորումներով հագեցվածության շարունակական ապահովում և միջազգային ստանդարտ պահանջներին համաձայն հավատարմագրված լաբորատորիայի առկայություն</p>	<p>-</p>	<p>2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ)</p>
		<p>13.6 Շրջակա միջավայրի վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ստեղծում</p>	<p>Բնապահպանական ազգային պորտալի և թեմատիկ շտեմարանների առկայություն, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկատվության փոխանցման գործընթացի ապահովում</p>	<p>Տարածքային կառավարման ել ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Առողջապահության նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Կադաստրի կոմիտե</p> <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p>	<p>2025թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

		13.7 Շրջակա միջավայրի նախարարության կողմից լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում	Լիցենզիաների, թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման ոլորտում ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում և լիցենզիաների և թույլտվությունների ստացման ժամանակահատվածի կրճատում:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)	2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Միջազգային դրամաշնորհ (բնապահպանական հիմնադրամներ կամ կազմակերպություններ)  շուրջ 15 000.0 հազ. դրամ	
14	Հիդրոոդերևութաբանության և շրջակա միջավայրի մշտադիտարկման համակարգի արդիականացումը՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ.	14.1 Հիդրոոդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմների զարգացում	Հիդրոոդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության առկայություն	---	2023-2026թթ.	ՀՀ պետական բյուջե՝ 200,000.0 հազ.դրամ Միջազգային դրամաշնորհ 483000.0 հազ.դրամ որից՝ ՄԱԶԾ դրամաշնորհային միջոցներ, 388,000.0 հազ.դրամ Համաշխարհային բանկ «Հայաստանի համար աղետների ռիսկի կառավարման ազգային ծրագիր», դրամաշնորհային միջոցներ 95,000.0 հազ.դրամ	
			«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական միջոցների արդիականացման և նոր սարքավորումներով համալրման աշխատանքների իրականացում, աշխատակիցների կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով դասընթացների կազմակերպում				2023թ. դեկտեմբերի 3-րդ
			--Հիդրոոդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում				2024թ. դեկտեմբերի 3-րդ

			<p>- Հիդրոոդերևութաբանական երևույթներից առաջացած կորուստների և վնասի հաշվառման, վերլուծության և արխիվացման միասնական համակարգի ձևավորում և տեղեկատվության հասանելիության ապահովում</p>		2025թ. դեկտեմբերի 3-րդ	2024թ.՝ Միջազգային դրամաշնորհ՝ 153000.0 հազ.դրամ
			<p>- Վտանգավոր հիդրոոդերևութաբանական երևույթների կանխատեսում (այդ թվում՝ երաշտ) և վաղօրոք նախագուշացման համակարգի առկայություն</p>		2026թ. դեկտեմբերի 3-րդ	
15	<p>Շրջակա միջավայրի պահպանության գործող տնտեսական մեխանիզմների կատարելագործում՝ հասցված վնասի համարժեք փոխհատուցման սկզբունքի ներդրմամբ, ինչպես նաև կանխարգելմանը, մեղմմանն ու չեզոքացմանն ուղղված օրենսդրական և ինստիտուցիոնալ մի շարք փոփոխությունների իրականացմամբ.</p>	<p>15.1 «Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և վերականգնման մասով բնապահպանական պատասխանատվության մասին» Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004 թվականի ապրիլի 21-ի 2004/35/ԵՀ հրահանգի մոտարկման շրջանակներում օրենսդրական փաթեթի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում</p>	<p>Շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և վերացման ընթացակարգերի, ինչպես նաև աղտոտողի կողմից վնասի կանխարգելման և վերացմանն ուղղված ծախսերի կատարման պարտավորությունների մեխանիզմի առկայություն</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին  ՎԱ տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ</p>	2026 թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

16	Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացվող միջոցառումների ու ծրագրերի մասին հասարակության իրազեկումը, էկոկրթության, մշակույթի, դաստիարակության լայնածավալ միջոցառումների իրականացումը, ոլորտի գործունեության թափանցիկության ապահովումը, նորարական տեխնոլոգիաների դերի	16.1 «Էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Կրթության մակարդակներում էկոլոգիական դաստիարակության արդյունավետ իրականացում բոլոր	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2022թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
		16.2 «Ապագա առաջնորդների ներգրավում, երիտասարդների համար	Խաղաֆիկացված թվային կրթական մոդուլի ստեղծում ավագ դպրոցի աշակերտների համար	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2021-2023թ.թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	Միջազգային դրամաշնորհ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության

	<p>բարձրացումը՝ ապահովելով սերտ համագործակցություն ակադեմիական ու գիտական ոլորտների հետ</p>	<p>հարմարվողականության հիմնախնդիրների և լավագույն փորձի վերաբերյալ թվային կրթական մոդուլի ստեղծում» ծրագրի իրականացում</p>	<p>1. Ստեղծված էկոկրթական բրաուզերային խաղի հիման վրա եռալեզու բջջային հավելվածի (IOS և Android համակարգերի համար) ստեղծում,  2. Հանրապետության ավագ դասարանների աշակերտների շրջանում առցանց մրցույթի կազմակերպում,  3. Մրցույթի արդյունքում ամենաբարձր միավորների արժանացած 40 մասնակիցների (հավասարապես բաշխված Հայաստանի մարզերի միջև և հավասար գենդերային հավասարակշռությամբ), եռօրյա «Հարմարվողականության փորձարարական լաբորատորիային» մասնակցելու հրավեր՝ իրենց համայնքների համար նորարարական լուծումներ գտնելու հարցում գիտելիքների ու հմտությունների մակարդակի բարձրացման համար:</p>		<p>2023թ. դեկտեմբերի 3-րդ</p>	<p>մասին» շրջանակային կոնվենցիայի Հարմարվողականության հիմնադրամ՝ 231 25 հազ. ԱՄՆ դոլար</p>
<p>17</p>	<p>Կանաչ տնտեսության և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակի խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը</p>	<p>17.1.«Շրջակա միջավայրի պահպանության ռազմավարությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում</p>	<p>Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության, հիմնախնդիրների, դրանց լուծմանն ուղղությունների, համապարփակ և կայուն կառավարման ամրագրումը: Ռազմավարությունը ներառելու է շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները և ռազմավարական ուղղությունները:</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  Առողջապահության նախարարություն</p>	<p>2025 թ. մարտի 3-րդ տասնօրյակը</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

				Արդարադատության նախարարություն Ներքին գործերի նախարարություն Էկոնոմիկայի նախարարություն Ֆինանսների նախարարություն Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Քաղաքաշինության կոմիտե		
--	--	--	--	---	--	--

**Պաշտպանության նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1	Ստեղծել ռազմաքաղաքական իրավիճակին, ռազմական սպառնալիքների գնահատված (կանխատեսվող) մակարդակին և	1.1 ՊՆ և ՁՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային կառուցվածքների փոփոխությունների իրականացում, գործառույթների հստակեցում ու բաշխում 1.2 Ձորամիավորումների, միավորումների, զորամասերի,	Կունենանք նոր կառուցվածքով, ժամանակակից պահանջներին համապատասխանող արդի զինված ուժեր, կմիավորվեն կրկնվող գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները		1-ին փուլ՝ 2021-2022թթ., 2-րդ փուլ՝ 2023-2024թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում



	հավանական ռազմական գործողությունների բնույթին համապատասխանող զինված ուժեր	ստորաբաժանումների կազմ- կառուցվածքի վերանայում 1.3 ՊՆ և ՁՈՒ ԳՇ կառուցված- քային ստորաբաժանումների նոր կառուցվածքների ներդրման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում				
2	ՀՀ զինված ուժերի համալրում ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով	2.1 ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների համալրում վերանայված կազմ-կառուցվածքին համապատասխանող սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով	Կավելանան գորքերի հետախու- զական, կրակային և խուսա- վարման հնարավորությունները	Բարձր տեխնոլոգիա- կան արդյունա- բերության նախարարություն	Մինչև 2026թ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգել- ված այլ աղբյուրներ
3	ՁՈՒ կառավարման համակարգի արդիականացում և կառավարման արդյունավետության բարձրացում	3.1 Շարունակել կապի համակարգի կատարելա- գործումը 3.2 Շարունակել կառավարման ավտոմատացված համակարգի (ստացիոնար և շարժական տարրերով) արդիականացման աշխատանքները՝ զորատեսակ- ների և ծառայությունների դեկավարման ենթահա- մակարգերով 3.3 Բարձրացնել հրամա- նատարների դերը, ստորաբա- ժանումների ինքնավարու- թյունը, անձնակազմի շարժառիթավորվածությունն ու նախաձեռնողականությունը:	Կբարձրանա կառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը, զորքերի կառավարման կայունության, անընդհատության, օպերատի- վության և ծածուկության մա- կարդակը	Բարձր տեխնոլոգիա- կան արդյունա- բերության նախարարություն	2022-2025թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատաս- խան տարվա համար նա- խատեսվելիք չա- փաքանակների շրջանակներում), օրենքով չարգել- ված այլ աղբյուրներ

4	Պաշտպանության ոլորտի ռազմավարական պլանավորման համակարգի ստեղծում, համապետական խնդիրների լուծմանն ու պաշտպանության կազմակերպման ընթացակարգերի հստակեցմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների իրականացում	4.1 Իրականացնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և կազմել պետության պաշտպանության համար մեկ միասնական մտահղացում, ոլորտի Պետության պաշտպանության պլանավորման փաստաթղթերի մշակման համար (ԶՈՒ կիրառման պլան, ԶՈւ ծավալման պլան, ԶՈՒ զարգացման պլան, Տարածքի պաշտպանության օպերատիվ սարքավորման պլան, Զորահավաքային պլան և այլն)	Պաշտպանության ոլորտում կունենանք փոխկապակցված փաստաթղթերի համալիր՝ մեկ միասնական փաստաթուղթ իր բաղկացուցիչ մասերով	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներ	Մինչև 2024թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
		4.2 Մշակել և Անվտանգության խորհրդի հաստատմանը ներկայացնել նոր ռազմական դոկտրինի նախագիծը	Կսահմանվեն ռազմական անվտանգության ռազմաքաղաքական հիմնադրույթները, պաշտպանության ռազմավարությունը, ռազմական անվտանգության ապահովման համակարգը և պետության ռազմական անվտանգության ապահովմանը նպատակաուղղված պետական մարմինների համակցված գործունեությունը	Միջգերատեսչական հանձնաժողովի անդամներ	Մինչև 2024թ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
		4.3 «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կառավարության կառուցվածքի	Օրենսդրորեն կլուծվեն պաշտպանության ոլորտի համակարգային խնդիրները, կհստակեցվեն պաշտպանության կազմակերպման ընթացակարգերը, ռազմական անվտանգության մարմինների պաշտպանության ոլորտին		2022թ. հունվարի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ներկայացում Վարչապետի աշխատակազմ:	առնչվող լիազորությունները և պարտականությունները			
5	Գործող զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատրաստության, պահեստազորայինների հաշվառման և զորահավաքի համակարգի համապատասխանեցում արդի պահանջներին	5.1 Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի համակարգի վերանայում, պահեստազորային պատրաստության համակարգի կատարելագործում  5.2 Ստեղծել քաղաքացիների հաշվառման միասնական բազա	Կունենանք հստակեցված զորահավաքային նախապատրաստության, պահեստազորային պատրաստության և զորահավաքի համակարգ: Հաշվառման միասնական բազայի ստեղծումն էականորեն կբարձրացնի պահեստազորայինների զինվորական հաշվառման մակարդակը և ամբողջականությունը, զորակոչի կազմակերպման և անցկացման, զորքերին անհրաժեշտ մասնագետների կցագրման աշխատանքների արդյունավետությունը և	Անվտանգության խորհրդի գրասենյակ  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Առողջապահության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Ոստիկանություն Ազգային անվտանգության ծառայություն Տարածքային	2022-2023թթ.  Մինչև 2024թ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			կնպաստի զորահավաքային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը	կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն		
6	ՀՀ-ում տարածքային պաշտպանության համակարգի ներդրում	6.1 «Պաշտպանության մասին» և այլ անհրաժեշտ ՀՀ օրենքներում կատարել փոփոխություններ և լրացումներ, ստեղծել տարածքային պաշտպանության կառավարման մարմին	Կունենանք տարածքային պաշտպանության համակարգ, որը հնարավորություն կընձեռի ռազմական գործողությունների ժամանակ հակառակորդի հնարավոր ոտնձգություններից հուսալիորեն պաշտպանել երկրի ներքին շրջանները, բնակչությունը, ենթակառուցվածքը և կարևորագույն օբյեկտները	Արտակարգ իրավիճակների նախարարություն  Ռստիկանություն  Ազգային անվտանգության ծառայություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Մինչև 2024թ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
7	Ռազմական ենթակառուցվածքի օպտիմալացում և զորքերի տեղակայման վայրերի բարելավում	7.1 Ռազմական ենթակառուցվածքն ու զորքերի տեղակայման վայրերը համապատասխանեցնել նորմատիվային պահանջներին	Կօպտիմալացվեն միավորումների, զորամասերի և ստորաբաժանումների տեղաբաշխման վայրերը, կնվազեցվեն հակառակորդի կողմից խոցման հնարավորությունները, իսկ խոցման դեպքում՝ հետևանքների նվազագույնի ապահովումը, կզարգացվի ճանապարհային ցանցը, կապահովվի պահեստային տնտեսությունների ապակենտրոնացումը, պաշտպանվածությունը		Մինչև 2026թ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
8	Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության	8.1 Զինված ուժերում զարգացնել զինծառայողի անհրաժեշտ բարոյական հատկությունները,	Կբարձրանա հոգեբանական աշխատանքների արդյունավետությունը, զինծառայողների՝		2022-2025թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան

	<p>մակարդակի բարձրացում, հրամանատարի դերի բարձրացում, զինվորական կարգապահության ապահովում և ոչ կանոնադրական հարաբերությունների նվազեցում</p>	<p>ամրապնդել հոգեբանական կայունությունը և մարտական գործողություններ վարելու պատրաստվածությունը: Բարձրացնել զինվորական կարգապահության մակարդակը և նվազագույնի հասցնել ոչ կանոնադրային հարաբերությունները Ձինված ուժերում</p> <p>8.2 Սահմանված թվով զորամասերում հոգեբանական օգնության կետերի ու հոգեբանական հաղթահարման արգելագոտիների լրասարքավորում</p> <p>8.3 «Հ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>ակտիվ մարտական գործողություններ վարելու պատրաստականությունը: Կամրապնդվի զինվորական կարգապահությունը:</p> <p>Գործող օրենքը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում օրենսդրորեն կլուծվեն հրամանատարի դերի բարձրացման, անձնակազմի շարժառիթավորվածության ու նախաձեռնողականության, զինվորական կարգապահության և բարոյահոգեբանական վիճակի ապահովման հետ կապված հարցերը</p>		<p>2022թ.</p>	<p>տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
9	<p>Պարտադիր ժամկետային և պայմանագրային ծառայության փոխլրացնող համակարգի շարունակական բարելավում, արհեստավարժ զինվորական ծառայության համակարգի ընդլայնում</p>	<p>9.1 «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության</p>	<p>Կավելանա պայմանագրային արհեստավարժ զինվորական ծառայության մեջ գտնվող անձնակազմի քանակը, կկրճատվի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տևողությունը</p>		<p>2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>

		մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի մշակում				
10	Միջազգային համագործակցության և հավաքական անվտանգության գործող ընթացակարգերի հնարավորությունների ընդլայնում	<p>10.1 Շարունակել աշխատանքները ՀՀ-ՌԴ և ՀԱՊԿ շրջանակներում հավաքական պաշտպանության գործող ընթացակարգերի պարզաբանման ուղղությամբ</p> <p>10.2 ՀՀ-ՌԴ համատեղ (միացյալ) և ՀԱՊԿ ուժերի մարտական կարողություններին զուգահեռ ամրապնդել ՀՀ ՁՈւ փոխգործունակության մակարդակը</p> <p>10.3 Իրականացնել բազմակողմ և երկկողմ ձևաչափով ռազմաքաղաքական խորհրդակցություններ</p> <p>10.4 Ապահովել ՀՀ ՁՈւ ներգրավվածությունը միջազգային գործողություններին</p> <p>10.5 Ապահովել ՀՀ պաշտպանության համակարգի բարեփոխումների խորհրդատվական ու</p>	Կկատարելագործվեն հավաքական պաշտպանության և համագործակցային անվտանգության գործող մեխանիզմները, ուժերն ու միջոցները, կշարունակվի զինված ուժերի արդիական սպառազինությամբ և այլ նյութական միջոցներով համալրումը, պաշտպանական բարեփոխումների համար խորհրդատվության ստացումը, պաշտպանության և անվտանգության հարցերում Հայաստանի Հանրապետության դիրքորոշումների հաղորդակցումը, ՀՀ ստանձնած միջազգային հանձնառությունների կատարումը	Անվտանգության խորհրդի գրասենյակ  Արտաքին գործերի նախարարություն	Մշտապես	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		փորձագիտական աջակցություն				
		10.6 Զարգացնել դաշնակից և գործընկեր երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցությունը				
11	Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և բարեվարքության ամրապնդում	11.1 ՊՆ ՌՈՒՀ-ի ՍՈԲԿ-ում և ՀՇՖ-ում «Պատշաճ կառավարում և բարեվարքության ամրապնդում պաշտպանության և անվտանգության ոլորտներում» կրթական ծրագրի և «Մարդու իրավունքները զինված ուժերում» առարկայի վերանայված ծրագրի ներդրում	Կբարձրանա բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման հարցերում անձնակազմի իրազեկվածության մակարդակը: Զինված ուժերը համալրող սպաները կունենան բավարար գիտելիքներ մարդու իրավունքների վերաբերյալ, ծառայության ընթացքում դրանց պաշտպանությունը և ենթականերին դասավանդումը կունենա մուլտիպլիկատիվ արդյունք	ՄԻՊ աշխատակազմ (համաձայնությամբ)	2022թ. սեպտեմբեր 2021-2026թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաքանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ
		11.2 Կանանց իրավունքների պաշտպանության թեմաներով դասընթացների կազմակերպում, ԶՈւ ստորաբաժանումներին քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի տրամադրում	Կբարձրանա մարդու իրավունքների խախտումների կանխարգելման, ինչպես նաև մարդու հիմնարար և երկրորդական իրավունքների վերաբերյալ անձնակազմի իրազեկվածության մակարդակը	ՄԻՊ աշխատակազմ (համաձայնությամբ)	2021-2023թթ.	
		11.3 Պաշտպանության ոլորտում մշտադիտարկում և քաղաքացիական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունների հետ	Թափանցիկության, հաշվետվողականության և հասարակական վստահության ամրապնդում		2021-2026թթ.	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

		համագործակցության զարգացում				
12	Ռազմական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների և գերակայությունների մշակում և իրագործում, ռազմակրթական համակարգի մրցունակության բարձրացում, ռազմական գիտության զարգացում	12.1.Սահմանել ռազմամասնագիտական թեքումով դասախոսների ընտրության համար արժանիքահեն և մրցութային ճկուն ընթացակարգեր	Կբարձրանա պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության արդյունավետությունը		2022-2023թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաբանակների շրջանակներում)
		12.2.Մշակել և ընդունել ռազմական կրթության նկատմամբ գրավչության բարձրացմանն ուղղված ծրագիր և դրա իրականացման ժամանակացույց	Սպայական և ենթասպայական հաստիքները կհամալրվեն որակյալ կադրերով		2022-2024թթ.	
		12.3 Ռազմական գործողությունների պլանավորման ու վարման ձևերի վերանայում	Պլանավորման և պատերազմավարման մեթոդները կհամապատասխանեցվեն ժամանակակից չափանիշներին		2022-2023թթ.	
13	Տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխում: Տեղեկատվական սպառնալիքների և մարտահրավերների մշտադիտարկման, վերլուծության, տեղեկատվական հակազդման և պայքարի միջոցառումների արդյունավետ իրականացում,	13.1 Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների հետ տեղեկատվական անվտանգության և կիբեռնահարձակման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման նպատակով կիբեռնահարձակման դեպքերի արագ արձագանքման խմբերի ընդլայնում	Տեղեկատվական անվտանգության ոլորտի կառույցների հետ գործընկերության ընդլայնման պայմաններում ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների կիբեռանվտանգության ստորաբաժանումների կիբեռնահարձակման դեպքերին արագ արձագանքման խմբերը արտակարգ իրավիճակներում առավել արդյունավետ կգործեն տեղեկատվական հակազդման և տեղեկատվական պայքարի	Անվտանգության խորհրդի գրասենյակ  Ազգային անվտանգության ծառայություն Ոստիկանություն Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն	2022-2025թթ.	Պետական բյուջե (բնագավառի գծով համապատասխան տարվա համար նախատեսվելիք չափաբանակների շրջանակներում), օրենքով չարգելված այլ աղբյուրներ





		<p>բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը</p>				
<p>14.2 Մարտական խնդիրներ իրականացնող գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող սպայական, ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողներին ատեստավորման արդյունքներով հավելավճար սահմանելու նպատակով օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում</p>	<p>Ատեստավորման և հավելավճարի համակարգի ներդրումը կարժևորի մարտական խնդիրներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինծառայողների մարտական ծառայությունը, կբարձրանա զինծառայողների դրամական ապահովությունը, կբարելավվի զինծառայողների ընտանիքների կենսամակարդակը, մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունեցող անձինք ամենամսյա պարգևավճար ստանալու իրավունք ձեռք կբերեն անկախ զինվորական կենսաթոշակի իրավունք ունենալու հանգամանքից</p>	<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ</p>	<p>2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ</p>			
<p>14.3 Աշխատանքային կենսաթոշակ կամ նպաստ ստանալու իրավունք ունեցող՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցների համար ամենամսյա պարգևավճար սահմանելու նպատակով «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի մշակում</p>	<p>Միջոցառման շրջանակներում նախատեսվում է լուծել նշված օրենքների և այլ իրավական ակտերի դրույթների գործնական կիրառման ժամանակ ի հայտ եկած խնդիրները՝ պայմանավորված դրանց ոչ բավարար</p>					

	վնասների հատուցման մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի մշակում	հստակությամբ, տարաբնույթ ընկալմամբ և տարրընթերցումների հանգամանքով			
	14.5 Հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն իրականացնող պայմանա- գրային զինծառայողների համար լրացուցիչ սոցիալական արտոնություններ և երաշխիքներ սահմանելու նպատակով համապատասխան օրենքի նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ	Նախագծերի ընդունման դեպքում մարտական հերթապահությունում ընդգրկված պայմանագրային զինծառայողների զավակների համար կսահմանվի ուսման վարձի մասնակի փոխհատուցում՝ առնվազն 30 տոկոսի չափով	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Ֆինանսների նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Կրթության, գիտու- թյան, մշակույթի և սպորտի նախարարություն	2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	

**Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1	Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում և համայնքային ծառայության համակարգի զարգացում	1.1 Մարզպետարանների կազմակերպական կառուցվածքների վերանայում՝ «Մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու» մասին ՀՀ Վարչապետի և «Հայաստանի	Տարածքային կառավարման մարմինների միատեսակ գործառույթների և կառուցվածքի սահմանում՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի նկարագրված		2022 թվականի հուլիսի 1--ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի ներկայացում կառավարության քննարկմանը</p>	<p>լիազորությունների շրջանակներում:</p>			
		<p>1.2 Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների իրականացում</p>	<p>«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում:      Ոլորտը կարգավորող շուրջ 13 ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծերի մշակում:      Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի արդիականացում: 2023թ. նախատեսվում է իրականացնել «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի շահագրգիռ մարմինների հետ քննարկման աշխատանքներ: 2024թ. նախատեսվում է լրամշակել «Համայնքային</p>		<p>2021-2025 թվականներ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

			<p>ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը և ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն փորձաքննության: 2025թ. նախատեսվում է «Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ</p>			
2	<p>Հանրապետության տարածքային համաչափ զարգացման, տարածքների սոցիալ-տնտեսական կայունության և հետագա տնտեսական ակտիվության և աճի ապահովում</p>	<p>2.1 Սահմանամերձ համայնքների բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի իրականացում</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Սյունիքի, Արարատի մարզերի 13 սահմանամերձ համայնքների 82 բնակավայրերի բնակիչներին ՀՀ պետական բյուջեից կտրամադրվի աջակցություն՝ էլեկտրաէներգիայի, բնական գազի, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոհատուցում, անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցում՝ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի 1444-Ն որոշման շրջանակներում: ՀՀ 2023թ. պետական բյուջեով «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման գծով</p>	<p>Մարզպետների աշխատակազմեր, Ջրային կոմիտե, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p>	<p>2021-2026թթ</p>	<p>ՀՀ պետական բյուջե 2024թ.՝ 988,933.7 հազ. դրամ 2025թ.՝ 988,933.7 հազ. դրամ 2026թ.՝ 988,933.7 հազ. դրամ</p>

			<p>նախատեսվել է <u>973.672.6 հազ. դրամ</u>: 2023 թվականին սոցիալական աջակցություն կստանա ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի 13 համայնքի 82 բնակավայրի բնակիչ-բաժանորդներ, այդ թվում՝ անշարժ գույքի հարկի փոխհատուցում՝ շուրջ 54298 (գույք) ֆիզիկական և իրավաբանական անձ, էլեկտրաէներգիայի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 26303 բնակիչ- բաժանորդ, բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 13335 բնակիչ- բաժանորդ, ոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 4022 ֆիզիկական և իրավաբանական անձ:</p> <p>ՀՀ 2024թ. պետական բյուջեով «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» միջոցառման գծով նախատեսվել է <u>988.933.7 հազ. դրամ</u>: 2024 թվականին սոցիալական աջակցություն կստանա ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի 13 համայնքի 82 բնակավայրի բնակիչ-բաժանորդներ, այդ թվում՝</p>			
--	--	--	--	--	--	--

			<p>անշարժ գույքի հարկի փոխհատուցում՝ շուրջ 60109 (գույք) ֆիզիկական և իրավաբանական անձ, էլեկտրաէներգիայի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 20024 բնակիչ- բաժանորդ, բնական գազի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 13604 բնակիչ- բաժանորդ, ռոտոման ջրի սակագնի մասնակի փոխհատուցում՝ շուրջ 4079 ֆիզիկական և իրավաբանական անձ:</p>			
		<p>2.2 «Հայաստանի Հանրապետության 2023-2027թթ. տարածքային զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը</p>	<p>Հայաստանի Հանրապետության 2022-2027 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը հնարավորություն կտա հստակեցնել և վերանայել տարածքային համաչափ զարգացման գերակա ուղղությունները, նպատակները, դրանց հասնելու հիմնական քայլերը՝ հաշվի առնելով արդեն իսկ իրականացված ծրագրերը, վարչատարածքային բարեփոխումները, հետպատերազմյան իրողությունները՝ ապահովելով կապը և համապատասխանությունը այլ ռազմավարական փաստաթղթերի հետ՝ մասնավորապես «2020-2050թթ Հայաստանի վերափոխման ռազմավարության»</p>		<p>2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

3	<p>Ապահովել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-228-Ն ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի կատարումը:</p>	<p>3.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:</p>	<p>ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» N 1910-Ն որոշումը համապատասխանեցնել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված թիվ ՀՕ-228-Ն «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխություններին:</p>		2022թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		<p>3.2 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:</p>	<p>3.2 ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Սանիտարահամաճարակային իրավիճակի վտանգ առաջանալու դեպքում մահացածների մարմինների դիակիզման, գերեզմանատների վնասազերծման և տեղափոխման ու վերահուլարկավորման կարգերը հաստատելու մասին» 1301-Ն որոշումը</p>	Առողջապահության նախարարություն	2022թ. մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում



			<p>համապատասխանեցնել 2021 թվականի մայիսի 27-ին ընդունված թիվ ՀՕ-228-Ն «Հուլարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխություններին:</p>			
4	<p>Հանրապետության տարածքային համաչափ զարգացմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության համայնքների ենթակառուցվածքների զարգացում</p>	<p>4.1 ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված, համայնքների կողմից ներկայացված և սահմանված չափորոշիչներին բավարարող ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակության ապահովում</p>	<p>Համայնքներում կապիտալ ներդրումների ակտիվացում, տնտեսական և սոցիալական նշանակության ենթակառուցվածքների բարելավում և արդիականացում, համայնքային բնակչության կյանքի որակի բարելավում: Յուրաքանչյուր տարի առնվազն 180 սուբվենցիոն ծրագրի (300-400 ենթածրագրի) իրականացում, որոնց արդյունքներով կբարելավվեն ՀՀ համայնքների ենթակառուցվածքները՝ մասնավորապես կառուցված կամ նորոգված ճանապարհներ, մանկապարտեզներ, մշակույթի տներ, համայնքային կենտրոններ, այգիներ, պուրակներ, էներգախնայող լուսավորության, ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման և գազամատակարարման</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե, Մարզպետների աշխատակազմեր, ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)</p>	2021-2026թթ	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ համայնքների բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

			համակարգեր, բազմաբնկարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության տարրեր գյուղատնտեսական և կոմունալ ծառայությունների համար մեքենասարքավորումներ:			
		4.2 Համայնքների խոշորացման արդյունքում ձևավորված համայնքների խոցելիության գնահատման նոր համակարգի մշակում, որը հիմք կհանդիսանա ենթակառուցվածքները բարելավելու նպատակով իրականացվելիք ներդրումային ծրագրերի մշակման համար	Կմշակվի միավորված համայնքները բնութագրող ամփոփ գնահատականների վրա հիմնված մեթոդական փաստաթուղթ, որի կիրառությունը հնարավորություն կտա ներդրումային ծրագրերը դարձնել հասցեական՝ թիրախային համայնքների ճիշտ ընտրության ճանապարհով	Էկոնոմիկայի նախարարություն	2023թ. մարտի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
5	Բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնակավայրերում աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավում	5.1 «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	Աղբի հետ գործածության ոլորտում օրենսդրական դաշտի բարելավմամբ օրենսդրական և ինստիտուցիոնալ հենքի ստեղծում՝ նպատակաուղղված թափոնների հինգաստիճան ստորակարգության կիրառմանը, այդ թվում՝ առաջացող թափոնների ծավալի նվազեցմանը, օգտահանման ենթակա թափոնների տեսակավորված հավաքմանը և դրանց վերամշակմանը	Քաղաքաշինության կոմիտե	2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		5.2 Նոր սանիտարական աղբավայրի կառուցում, փակման ենթակա աղբավայրերի փակում և գործող աղբանոցների բարեկարգում	Քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նվազագույն նորմերին համապատասխան աղբավայրերի համակարգի ներդրում,	ՀՀ համայնքներ (համաձայնությամբ), Շրջակա միջավայրի նախարարություն	2022-2026թթ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ համայնքների բյուջե,

			հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրի կառուցում, թվով 25 աղբավայրի փակում 2023 թվականի ընթացքում, 20 աղբավայրի փակում և 10 աղբավայրի բարեկարգում 2024 թվականին՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի հեռացման վայրերի բացասական ու վնասակար ազդեցությունների նվազեցման նպատակով:			ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ
	5.3 Գոյացող աղբի պատշաճ կերպով հավաքման, տեղափոխման և հեռացման կամ վերամշակման գործընթացների ապահովում	Աղբի հավաքման արդյունավետ սխեմաների ներդրում (2025թ. ընթացքում), տարբեր տեսակի թափոնների գործածության համար ընթացակարգերի կիրարկում (2023թ. ընթացքում՝ մշակում), ինչի շնորհիվ թափոնների առանձին տեսակների կրկնօգագործման, օգտահանման և վերամշակման արդյունքում կնվազեցվի աղբավայրերում տեղադրվող աղբի ծավալը:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն,  Մարզպետների աշխատակազմեր,  ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)	2022-2026թթ.	ՀՀ պետական բյուջե, ՀՀ համայնքների բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	
	5.4 «ՀՀ կառավարության 01.04.2021թ N464-L որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ	Աղբահանության համակարգի ռազմավարության կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացում՝ հանրապետության բնակավայրերում ինտեգրված և կայուն աղբահանության համակարգի ներդրման ապահովում:	Մարզպետների աշխատակազմեր,  ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)	2024 թվականի մարտի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում	

6	<p>ՀՀ պետական հանրակրթական դպրոցական շենքերի սեյսմիկ անվտանգության բարելավում</p>	<p>6.1 Սեյսմիկ տեսանկյունից առավել խոցելի և առաջնահերթ կարգով բարելավման անհրաժեշտություն ունեցող դպրոցական շենքերի ուժեղացում/ նորերի կառուցում</p>	<p>Դպրոցական աշակերտների անվտանգ կրթական պայմանների ապահովում, ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին համապատասխան կրթական պայմանների ապահովում: Առնվազն 18 դպրոցական շենքերի կառուցում, որոնք կբավարարեն ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին, մասնավորապես՝ կլինեն սեյսմակայուն առնվազն 9 բալ երկրաշարժի դեպքում, էներգախնայող և այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավորություններով, մատչելի հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Արդյունքում՝ 18 պետական հանրակրթական դպրոցներում կապահովվեն անվտանգ, ժամանակակից քաղաքաշինական և կրթական բոլոր չափանիշներին համապատասխան կրթական պայմաններ: 2023թ. նախատեսվում է ավարտել /ապահովել նաև կահույքով/ առնվազն 10 դպրոց: 2023թ. նախատեսվում է մեկնարկել առնվազն 8 դպրոցների շինարարական աշխատանքներ:</p>	<p>Քաղաքաշինության կոմիտե</p> <p>Արտակարգ իրավիճակների նախարարություն,</p> <p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,</p> <p>Տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	<p>2021-2023թթ.</p>	<p>ՀՀ պետական բյուջե, ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>
---	---	--	---	--	---------------------	---

7	Միավորված բազմաբնակավայր համայնքներում քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում և հասանելիության ընդլայնում	7.1 Միավորված համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (<ԿՏՀ) ներդրում	Վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված բազմաբնակավայր նոր համայնքներից 26-ում կարդիականացվեն համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի (<ԿՏՀ) գործառնական հնարավորությունները, կիրականացվեն տվյալների բազաների ինտեգրման և համայնքների տարածքում միասնական տեղեկատվական միջավայրի կազմավորման աշխատանքներ: Կարդիականացվի նաև մոտ 210 բնակավայրերի վարչական գրասենյակներում առկա կազմակերպական տեխնիկայի պարկը:		2022-2023թթ.	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Շվեյցարիայի համագործակցության ընկերության դրամաշնորհ
		7.2 Միավորված բազմաբնակավայր համայնքներում «մեկ պատուհան» սկզբունքով գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակների (ՔՍԳ) հիմնում և արդիականացում	Քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՍԳ) կհիմնվի 1 միավորված համայնքում, կարդիականացվեն ևս 2 համայնքներում նախկինում հիմնված և գործող ՔՍԳ-ները:		2022-2023թթ.	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) և Շվեյցարիայի համագործակցության ընկերության դրամաշնորհ
		7.3 «Պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորների ցանկը հաստատելու,	2023 թվականին նախատեսվում է մշտադիտարկումներ և ուսումնասիրություններ իրականացնել օպերատորների ցանկում արդեն իսկ ներառված և պետական ծառայություններ	Արդարադատության նախարարություն	2022-2024թթ.	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում

	51.4 Թունելներին ներկայացվող անվտանգության նվազագույն պահանջների կիրառում	<ul style="list-style-type: none"> <li>Թունելներում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար անվտանգության նվազագույն մակարդակի ապահովում ԵՄ չափանիշներին համապատասխան</li> </ul>	Քաղաքաշինության կոմիտե «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, դրամաշնորհային միջոցներ Ֆինանսական միջոցների չափը կորոշվի միջոցառման

			<ul style="list-style-type: none"> <li>Թունելներում ճանապարհային երթևեկության մասնակիցների համար անվտանգության նվազագույն մակարդակի ապահովում</li> </ul> <p>Թունելներում ճանապարհատրանսպորտային պատահարների նվազեցում</p>	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)		իրականացման գործընթացում
52	Ճանապարհային ակտիվների կառավարման առկա համակարգի գնահատում և հետագա անհրաժեշտ բարելավումների իրականացում	52.1 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1419-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Ճանապարհների պահպանման պատասխանատու ստորաբաժանման կողմից իրականացվող գործառնությունների համապատասխանեցում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված գնումների պատասխանատու ստորաբաժանման գործառնություններին, ավտոմոբիլային ճանապարհների սպասարկման աշխատանքների արժեքներին համապատասխան լրացուցիչ պահանջների սահմանում՝ ապահովելով սպասարկման աշխատանքների շարունակական բարեփոխումները	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2021թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
53	Ճանապարհների պետական գրանցում	53.1 Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների չափագրում և պետական գրանցում	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցում:	Կադաստրի կոմիտե, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2022-2026թթ	ՀՀ պետական բյուջե և դրամաշնորհային միջոցներ (կիրականացվի ֆինանսական



			2023թ. կիրականացվի առնվազն 1 ճանապարհահատվածի չափագրում և պետական գրանցում: 2025 թվականին կիրականացվի առնվազն 1 միջպետական նշանակության ճանապարհի չափագրում և պետական գրանցում:			միջոցների առկայության դեպքում)
54	Ճանապարհային երթևեկության կազմակերպման գործընթացի կանոնակարգում, ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանեցում	54.1 Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 1206-Ն, 2006թ. հոկտեմբերի 26-ի N 1699-Ն, 2008թ. հունվարի 10-ի N 113-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներով լիարժեք ապահովման հստակեցում	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում
55	Ճանապարհային ենթակառուցվածքների վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատում և մեղմացնող գործողությունների իրականացում	55.1 ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների կլիմայական փոփոխությունների ռիսկերի գնահատում և ընթացիկ աշխատանքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի մշակում և իրականացում՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան	<ul style="list-style-type: none"> <li>2024թ.՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը մշակված է: <ul style="list-style-type: none"> <li>Ճանապարհաշինության աշխատանքներում հաշվի են առնվում կլիմայի փոփոխության հիմնական գործոնների ազդեցությունները՝ մասնավորապես իրականացվում է տեղումների և ջերմաստիճանների</li> </ul> </li> </ul>	Շրջակա միջավայրի նախարարություն	2024-2026թթ.	100% դրամաշնորհային միջոցներ

			փոփոխությամբ պայմանավորված ճանապարհային պատվածքի փոփոխության ազդեցության գնահատում			
56	Ճանապարհային ոլորտի մասնագետների և կազմակերպությունների կարողությունների զարգացում	56.1 Յուրաքանչյուր տարի ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման տարեկան ծրագրի մշակում և դասընթացների կազմակերպում	<ul style="list-style-type: none"> <li>Մասնագիտական ներուժի մեծացում՝ ճանապարհային ոլորտի մասնագետների կրթության և վերապատրաստման միջոցով, այդ թվում՝ արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատություններում և միջազգային շինարարական և ինժեներական ընկերություններում, միջազգային առաջատար փորձի փոխանակում <ul style="list-style-type: none"> <li>Յուրաքանչյուր տարի կվերապատրաստվի ճանապարհային ոլորտի մասնագետների առնվազն 30%-ը.</li> <li>Յուրաքանչյուր տարի արտասահմանյան առաջատար ուսումնական հաստատություններում և միջազգային շինարարական և ինժեներական ընկերություններում վերապատրաստում կանցնեն ոլորտի առնվազն 3 մասնագետներ</li> </ul> </li> </ul>	Քաղաքաշինական կոմիտե  «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)  «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)	2022-2026թթ	100% դրամաշնորհային միջոցներ
		56.2 Ճանապարհային ոլորտում ընդգրկված առանցքային սուբյեկտների (պատվիրատուներ,	Ճանապարհային ոլորտում ընդգրկված առանցքային սուբյեկտների կարողությունների	Քաղաքաշինական կոմիտե	2022-2026թթ	100% դրամաշնորհային միջոցներ

		<p>նախագծողներ, կապալառուներ, տեխնիկական հսկողություն իրականացնողներ և այլն) կարողությունների գնահատման և դրանց բարձրացման մեխանիզմների սահմանում</p>	<p>գնահատում և որակի բարձրացում: 2023-2024թթ. նախատեսվում է ճանապարհային ոլորտի մասնագետների ուսուցման և վերապատրաստման դասընթացների իրականացում ոլորտի մասնագետների համար Մոսկվայի ավտոճանապարհային պետական տեխնիկական ինստիտուտի անվճար վերապատրաստման դասընթացներում</p>	<p>«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)</p> <p>«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)</p>		
57	<p>Ճանապարհներին հասցված վնասների, այդ թվում՝ ճանապարհային նշանների և կահավորանքի այլ տարրերի գողության և/կամ վնասման համար պատասխանատվության խստացում</p>	<p>57.1 «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Ճանապարհներին հասցված վնասների համար վարչական և քրեական պատասխանատվության դրույթների խստացում</p>		<p>2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>
58	<p>Ճանապարհների պաշտպանական գոտիներում գտնվող տարածքների կառուցապատման կանոնակարգում</p>	<p>58.1 «ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը</p>	<p>Ճանապարհների պաշտպանական գոտիներում գտնվող տարածքների՝ որպես հատուկ կարգավորման օբյեկտների նկատմամբ օրենսդրական լրացուցիչ պահանջների սահմանում, դրանց տնօրինման և կառավարման միասնական քաղաքականության մշակում</p>		<p>2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>

59	<p>Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների կանխարգելում</p>	<p>59.1 Ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և ճանապարհային երթևեկությանը անվտանգությանը սպառնացող օբյեկտների ապամոնիտաժման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ</p>	<p>2023թ. առնվազն մեկ մարզում իրականացվել են ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և դրանց ապամոնիտաժման նպատակով հաշվարկված են անհրաժեշտ ֆինանսական միջոցները, 2024-2026թթ. յուրաքանչյուր տարի առնվազն երեք մարզերում իրականացվել են ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում առանց ճանապարհը տնօրինողի համաձայնության կառուցված կամ կառուցվող օբյեկտների գույքագրում և դրանց ապամոնիտաժման նպատակով հաշվարկված են անհրաժեշտ ֆինանսական միջոցները և առաջարկություններ են ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:</p> <p>Անվտանգ երթևեկության ապահովում, ավտոմոբիլային ճանապարհների հարակից տարածքներում օբյեկտների կառուցման կանոնակարգում</p>	<p>Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին, Կադաստրի կոմիտե, Ոստիկանություն, Քաղաքաշինության կոմիտե, Մարզպետների աշխատակազմ, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	2023-2026թթ.	<p>Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում</p>
60	<p>Ճանապարհային ոլորտում պետություն-մասնավոր հատված</p>	<p>60.1 Ճանապարհային ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցության</p>	<ul style="list-style-type: none"> <li>• Ճանապարհային ոլորտում պետություն-մասնավոր հատված</li> </ul>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2025թ հունիսի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, դրամաշնորհային միջոցներ,</p>

	համագործակցության ձևաչափի խթանում	ծրագրերի մշակում և առաջարկությունների ներկայացում ՀՀ Վարչապետի աշխատակազմ	համագործակցության ծրագրերը մշակված են <ul style="list-style-type: none"> <li>• ՊՄԳ պայմանագրերի համաձայն իրականացվող ՊՄԳ ծրագրերի առկայություն</li> <li>• Մինչև 2026թ-ը ճանապարհների շինարարության, հիմնանորոգման և կառուցման գործընթացներում առնվազն 2 ՊՄԳ պայմանագրի առկայություն</li> </ul>	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)  «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ)		մասնավոր ընկերությունների ներդրումներ Գումարի չափը կորոշվի ՊՄԳ պայմանագրի շրջանակներում
61	Դեպի «ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր գրունտային ճանապարհի կառուցում	61.1 «Ալպյան» մարգագետիններ և արոտավայրեր տանող գրունտային ճանապարհների կառուցում	<ul style="list-style-type: none"> <li>• 2023թ-ին գրունտային ճանապարհների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում 2024-2025թթ յուրաքանչյուր տարի 30կմ գրունտային ճանապարհի կառուցում,</li> <li>• «ալպիական» մարգագետինների, ազգային պարկերին լրացուցիչ եկամուտներ ապահովելու, պատմամշակութային, ուսումնական ու գիտաճանաչողական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և տուրիզմի այլ ձևերի զարգացում</li> </ul>	Էկոնոմիկայի նախարարություն  «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2023-2025թթ	ՀՀ պետական բյուջե, վարկային և դրամաշնորհային միջոցներ  Ֆինանսական միջոցների չափը կորոշվի յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով
62	Երկաթուղային տրանսպորտով երթևեկության անվտանգության մակարդակի և մատուցվող	62.1 Ուղևորատար և բեռնատար շարժակազմի ձեռքբերում, գործող շարժակազմի արդիականացում	Ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալների ու արդյունավետության ավելացում, երթևեկության անվտանգության և	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (համաձայնությամբ)	2021-2026թթ. Կոնցեսիոն պայմանագրի գործունեության ընթացքում	Կոնցեսիոն պայմանագրի ներդրումային ծրագիր Մինչև 2024թ. 39 մլրդ ՀՀ դրամ:

	ծառայությունների որակի բարձրացում		ծառայությունների մատուցման որակի բարձրացում: Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ 37 կմ գծի հիմնանորոգում: 2023 թվականին նախատեսվում է երկաթուղային գծի 17 կմ հիմնանորոգում: 2024թ-ի ընթացքում նախատեսվում է իրականացնել 9,725 կմ երկաթգծի նորոգում:			Ըստ ձեռք բերված համաձայնության՝ 2025-2038թթ. ներդրումների ծավալները կավելացվեն և կկազմեն 95 մլրդ ՀՀ դրամ:
63	Երկաթուղային ուղևորափոխադրումներից առաջացած վնասների սուբսիդավորման վերանայում	63.1 Սուբսիդավորման նոր մեխանիզմների մշակում և Կոնցեսիոն պայմանագրում փոփոխությունների կատարում	Երկաթուղային ենթակառուցվածքների զարգացում և բարելավում	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (համաձայնությամբ)	2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե
		63.2 Մշակված մեխանիզմի ընտրություն և Կոնցեսիոն պայմանագրում փոփոխությունների կատարում	Կոնցեսիոն պայմանագրում համապատասխան փոփոխությունների կատարում	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (համաձայնությամբ)	2024 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	
64	Առևտրային ծովագնացության հնարավորությունների զարգացում	64.1 Առևտրային ծովագնացության մասին օրենքի օրենքի նախագծին հավանություն տալու մասին կառավարության որոշման ընդունում	Առևտրային ծովագնացության զարգացում և բեռնաշրջանառության ավելացում		2023թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
65	«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից ներկայացվող 5-ամյա Մաստեր պլանի հաստատման գործընթացի ապահովում, Մաստեր	65.1-65.2 Երևանի «Զվարթնոց» և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի և ենթակառուցվածքների բարեկարգմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ	Մաստեր պլանով նախատեսված ներդրումների ապահովում և աշխատանքների իրագործում: Ենթակառուցվածքի շարունակական զարգացում:	«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ (համաձայնությամբ), Քաղաքաշինության կոմիտե, Էկոնոմիկայի նախարարություն,	2021-2026թթ.	1. «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ կողմից՝ համաձայն Մաստեր պլանի

	<p>պլանի իրագործում, Կոնցեսիայի պայմանագրին կից ակտիվների ցանկերի ճշգրտում</p>			<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>		
		<p>65.3 կոնցեսիոն ակտիվների գույքագրում</p>	<p>«Արմենիա միջազգային օդանավականներ» ՓԲԸ-ին կոնցեսիայի իրավունքով օգտագործման հանձնված և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված «Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայան» ՊՓԲ և «Գյումրու «Շիրակ» օդանավակայան» ՓԲ ընկերությունների ակտիվների գույքագրում, գույքագրման արդյունքներով ճշգրտել առկա գույքի կազմը (անշարժ, շարժական գույք, պաշարներ) և ներկայացնել առաջարկություններ լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրս գրման վերաբերյալ:</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտե</p>	<p>2023 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>
<p>66</p>	<p>Դեպի Հայաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետությունից չվերթերի աշխարհագրության ընդլայնում և մատչելի</p>	<p>66.1 Ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն</p>	<p>Մրցակցության ապահովում, որի արդյունքում ակնկալվում է ավիատոմսերի սակագների նվազեցում: Ավիացիոն համակարգի շուկա 2023 թվականին նախատեսվում է երկու հայկական ավիաընկերությունների մուտքը:</p>	<p>«Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ (համաձայնությամբ), Էկոնոմիկայի նախարարություն,</p>	<p>2021-2026թթ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

	ավիափոխադրումների ապահովում			Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտե		
67	Ավիացիոն շուկայի ազատականացում ԵՄ անդամ բոլոր պետությունների հետ	67.1 «ՀՀ և ԵՄ և ԵՄ անդամ-պետությունների միջև ընդհանուր Ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրման գործընթացի կազմակերպում	«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագրի ստորագրում, ԵՄ անդամ պետությունների հետ ընդհանուր ավիացիոն գոտու ստեղծում, օդային հաղորդակցությունների իրականացման աշխարհագրության ընդլայնում, ինչպես նաև միջազգային ավիացիոն համակարգի զարգացում:		2021-2026թթ	Ֆինանսավորում չի պահանջվում
68	Թոփչքային և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացում՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին, «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթներին և, առավել	68.1 «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներկայացում	Ավիացիայի ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	2022 թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ (գումարի չափը կիստակեցվի գնահատում իրականացնելուց հետո)
	«Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիայի դրույթներին և, առավել	68.2 Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից «Ավիացիայի մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական	Ավիացիայի ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի համապատասխանեցում միջազգային չափորոշիչներին	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության	2021 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Չի պահանջում



<p>հնարավոր չափով, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության, և ավիացիայի ոլորտին առնչվող այլ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված միջազգային ստանդարտներին, առաջարկվող գործելաձևերին ու ընթացակարգերին դրանց համապատասխանությունը</p>	<p>ակտեր ընդունելու լիազորության հստակեցում</p>		<p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտե,</p>		
	<p>68.3 Թռիչքային և ավիացիոն անվտանգությանն առնչվող թերությունների, անհամապատասխանությունների հիմնապատճառների բացահայտում, ուղղիչ գործողությունների պլանի մշակում և վերջիններիս պատշաճ կերպով իրականացման համակարգում</p>	<p>Ավիացիոն ոլորտում արձանագրված թերությունների և անհամապատասխանությունների հիմնապատճառների վերլուծության և ուղղիչ գործողությունների կատարման արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել թռիչքային և ավիացիոն անտանգությանը սպառնացող ռիսկերը:</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>	<p>2022 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
	<p>68.4 Էլեկտրոնային համակարգերի ներդրում, ինչպես նաև գործող տեղեկատվական և վերլուծական տվյալների բազաների թվայնացում:</p>	<p>Թվայնացման արդյունքում հնարավոր կլինի նվազեցնել մարդկային գործոնի ռիսկերը, ինչպես նաև ապահովել աշխատանքի բարձր որակի արդյունավետությունը:</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2026 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
<p>68.5 Կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորումների բարձրացում՝ տեսական և գործնական դասընթացների միջոցով</p>	<p>Արդյունքում Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնագետները կստանան համապատասխան որակավորում, կիրականացնեն իրենց պարտականությունները միջազգային ստանդարտների, մասնավորապես՝</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>	<p>2021-2026թթ.</p>	<p>Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ</p>	

			<p>Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ICAO), Եվրոպական թռիչքային անվտանգության գործակալության (այսուհետ՝ EASA) և այլ փաստաթղթերին համապատասխանության համատեքստում:</p> <p>Մասնագիտական որակավորումների բարձրացումը տեսական և գործնական դասընթացների միջոցով նախատեսված է միջազգային քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայի 1, 6 և 8-րդ հավելվածներով:</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնագետների անհրաժեշտ որակավորումների բարձրացումը՝ տեսական և գործնական դասընթացների միջոցով իրականացվում է ամենամյա վերապատրաստումների պլանի համաձայն:</p> <p>2023թ. նախատեսվում է անցկացնել նվազագույնը 80 դասընթաց, որին կմասնակցեն Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 180 աշխատողներ:</p> <p>2024 թվականի ընթացքում նախատեսվում է անցկացնել նվազագույնը 62 դասընթաց, որին Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից կապահովվի 131 մասնակցություն:</p>			
--	--	--	---	--	--	--

			(աշխատողների մի մասը մասնակցում է մեկից ավել դասընթացի):			
69	Ընդհանուր նշանակության ավիացիայի անվտանգ զարգացում. անօդաչու թռչող համակարգերի, ինչպես նաև թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների շահագործման նոր ընթացակարգերի ընդունում	69.1 Անօդաչու թռչող համակարգերի շահագործման նոր ընթացակարգի ընդունում, թվային պլատֆորմի ստեղծում և համակարգում	Կնպաստի անօդաչու թռչող համակարգերի զարգացմանը և կկանոնակարգի դրանց անվտանգ շահագործումը: Քարտեզների մշակումը և թույլատրելի թռիչքային գոտիների սահմանումը հնարավորություն կտա ապահովել օդային տարածքի օգտագործման անվտանգությունը:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե, Պաշտպանության նախարարություն, Ոստիկանություն Կադաստրի կոմիտե Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտե	2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ
		69.2 Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների շահագործման նոր ընթացակարգերի ընդունում	Կնպաստի ընդհանուր նշանակության ավիացիայի զարգացմանը և կկանոնակարգի թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների անվտանգ շահագործումը: Թռիչքադաշտերի և ուղղաթիռահարթակների վերաբերյալ ընթացակարգերի մշակման և իրականացման արդյունքում ներդրողների մոտ կառաջանա հնարավոր ներդրումներ իրականացնելու և ընդհանուր նշանակության ավիացիան զարգացնելու հետաքրքրություն:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածք-ների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե,  Պաշտպանության նախարարություն Կադաստրի կոմիտե	2022թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում

70	<p>Միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ տարածաշրջանային ավիատուումնական կենտրոնի ստեղծում</p>	<p>70.1 Ուսումնասիրել միջազգային կազմակերպությունների կողմից հավաստագրված ավիատուումնական կենտրոնները և բանակցություններ վարել ընտրված միջազգային ավիատուումնական կենտրոնների ղեկավար կազմի հետ և նպաստել միջազգային չափանիշներին համապատասխան մրցունակ տարածաշրջանային ավիատուումնական կենտրոնի կայացմանը:</p> <p>Ուսումնասիրության շրջանակներում դիտարկել ներդրողների մասնակցության նպատակահարմարությունը, կոնցեսիոն կառավարման հնարավորությունները՝ չբացառելով պետական մասնակցությունը:</p>	<p>Բանակցությունների արդյունքում կսահմանվի համագործակցության ձևաչափը:</p> <p>Արդյունքում Հայաստանի ավիացիոն ոլորտն իր մասնագետներով հանդերձ կդառնա ավելի անկախ՝ ի զորու լինելով դիմակայել իր առջև ծառայած ցանկացած մարտահրավերի:</p> <p>Որակյալ ավիացիոն կրթության ապահովելու արդյունքում արտերկրի ուսանողները նախապատվությունը կտան ՀՀ ավիատուումնական կենտրոնում սովորելուն:</p> <p>Միջազգային ավիացիոն ոլորտում ՀՀ վարկանիշը կբարելավվի:</p> <p>Կպատրաստվեն նոր ավիացիոն մասնագետներ, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել հետագա սերնդափոխությունը</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>	<p>2026թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ (գումարի չափը կհստակեցվի գնահատում իրականացնելուց հետո)</p>
		<p>70.2 Ավիատուումնական կենտրոնների հավաստագրման գործընթացը կանոնակարգող օրենսդրական դաշտի վերանայում՝ միջազգային չափանիշներին համապատասխան</p>	<p>Օրենսդրական դաշտի կարգավորման արդյունքում՝ ավիատուումնական կենտրոնների հավաստագրման գործընթացը կհամապատասխանեցվի միջազգային ստանդարտներին, ինչը կնպաստի ՀՀ գործող ավիացիոն կրթահամալիրների արդիականացմանը և տարածաշրջանում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե</p>	<p>2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>

			մրցունակությանը, ինչպես նաև խթան կարող է հանդիսանալ ավիացիոն մասնագետներ պատրաստող համալիրների ոլորտում ներդրումների հարցում:			
71	Օրենսդրական փոփոխությունների միջոցով նպաստավոր միջավայրի և պայմանների ստեղծում՝ տեղական ավիաընկերությունների ստեղծման համար	71.1 Առաջարկել օրենսդրական փոփոխություններ՝ ստեղծելով նպաստավոր միջավայր և պայմաններ ավիաընկերությունների շահագործման, ինչպես նաև տեղական նոր ավիաընկերությունների ստեղծման և ավիացիայի զարգացման համար:	Օրենսդրական փոփոխությունների արդյունքում խթանելու ենք հայաստանյան ավիաընկերությունների զարգացումը, նպաստելու ենք ինչպես միջպետական, այնպես էլ ներպետական կապերի ամրապնդմանը, բարձրացնելու ենք պետության ճանաչելիությունը միջազգային ասպարեզում:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	2022թ. հուլիսի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
		71.2 Գործող իրավական ակտերի վերանայում՝ համապատասխանեցնելով ICAO ստանդարտներին և առաջարկվող գործելաձևերին,	Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման ընթացակարգի լիարժեք համապատասխանեցում գործող միջազգային չափանիշներին:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	2022թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում
72	Ուղևորների սպասարկման որակի բարելավում՝ համաձայն միջազգային պահանջների	72.1 Ուղևորների վերաբերյալ նախնական տեղեկատվության (ՈՒՆՏ) համակարգի ներդրում	Համապատասխանեցում միջազգային չափանիշներին՝ բարելավելով ավիացիոն անվտանգությունը	Անվտանգության խորհրդի գրասենյակ,  Ընթացակարգերի պարզեցման ազգային կոմիտե, Արտաքին գործերի նախարարություն Պետական եկամուտների կոմիտե Ազգային անվտանգության ծառայություն	2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված այլ միջոցներ

				Ոստիկանություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե,		
73	Երևանը «Ձվարթնոց» օդանավակայանի հետ կապող տրանսպորտային ենթակառուցվածքների (ճեպագնաց, մետրո կամ ավտոմայրուղի) զարգացում	73.1 Կառավարությունը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և այլ գերատեսչությունների հետ քննարկելու և ձեռնարկելու է միջոցառումներ՝ ուղղված Երևանը «Ձվարթնոց» օդանավակայանի հետ կապող տրանսպորտային ենթակառուցվածքների (ճեպագնաց, մետրո կամ ավտոմայրուղի) զարգացմանը:	Նոր կառուցված ճանապարհը հնարավորություն կտա օդանավակայան և օդանավակայանից դեպի մայրաքաղաք հասնել արդյունավետ ժամանակահատվածում, ինչը կնպաստի տուրիզմի զարգացմանը և ավիափոխադրումների աճին: Այլընտրանքային ճանապարհը կապահովի նաև արտակարգ իրավիճակների դեպքում փրկարար ուժերի և միջոցների արագ տեղաշարժը դեպի օդանավակայան: 2023 նախատեսվում են առանց ֆիսկալ տարածքի օգտագործման վերաբերյալ բանակցությունների շարունակություն	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) և այլ գերատեսչություններ	2022-2024 թթ.	Պետական բյուջե կամ օրենքով չարգելված այլ միջոցներ
74	Կառավարությունը «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի մասնակցությամբ բանակցություններ է	74.1 Աշխատանքներ իրականացնել ավիափոխադրումների ծավալները վերականգնելու ուղղությամբ՝ կիրառելով ավիաընկերությունների ծախսերը նվազեցնող մեխանիզմներ (ներառյալ տնտեսության վրա դրական	Արդյունքում կունենանք ավիափոխադրումների, ուղևորահոսքի թվաքանակի աճ, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե, Ֆինանսների նախարարություն,	2022թ. հուլիսի 1-ին տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջում

	<p>վարելու աշխարհում առաջատար ավիաընկերությունների հետ՝ դեպի Հայաստան և Հայաստանից ավիափոխադրումներ իրականացնելու համար: Միաժամանակ բանակցություններ ենք վարելու հայաստանյան ավիաընկերությունների հետ՝ վերջիններիս գործունեության համար նպաստավոր միջավայր և պայմաններ ստեղծելու, ինչպես նաև մրցունակության բարձրացման ուղղությամբ:</p>	<p>ազդեցության պարագայում օդի տուրքի ամբողջական վերացում): Պայմանավորվածություն ձեռք բերել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ՝ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով</p> <p>74.2 Պայմանավորվածություն ձեռք բերել «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի հետ՝ դեպի ԱՄՆ ուղիղ չվերթերի ապահովման աշխատանքների իրականացման և համապատասխան թույլտվություններ ստանալու նպատակով</p>	<p>ցուցանիշների բարելավմանը, ինչը նաև կխթանի տնտեսական ակտիվությունը:</p> <p>Արդյունքում կունենանք ուղիղ ավիափոխադրումներ դեպի ԱՄՆ և հակառակ ուղղությամբ, կընդլայնվի թռիչքների աշխարհագրությունը, կաճի ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալները</p>	<p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ ի նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե, Արտաքին գործերի նախարարություն</p>	<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջում</p>
75	<p>Կառավարությունը միջոցներ է ձեռնարկելու ուժեղացնել ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի պետական մասնագիտական քննության անցկացման լիազորված մարմնի ինստիտուցիոնալ կարողությունները, որը</p>	<p>75.1 Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից լիովին անկախ, որակյալ մասնագետներից կազմված ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության մարմնի՝ միջազգային ստանդարտներին համապատասխան գործառույթների պատշաճ իրականացում: Նախատեսված է միջազգային</p>	<p>Արդյունքում հնարավորություն է տրվելու ապահովել Կոմիտեից անկախ թափանցիկ և պատշաճ քննությունների իրականացում:</p> <p>Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից անկախ լիազորված մարմին ունենալը սահմանվում է մի շարք միջազգային համաձայնագրերով, և ապահովում է թռիչքային անվտանգության հարցերում</p>		<p>2022թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միջոցների հաշվին</p>

	կիրականացնի պատահարների և լուրջ միջադեպերի՝ միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական քննություն և կլինի անկախ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեից:	քաղաքացիական ավիացիայի կոնվենցիայի 13-րդ հավելվածով	առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա պատահարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև բացառում է շահերի բախումը պատահարների և լուրջ միջադեպերի մասնագիտական քննության ժամանակ և անվտանգության վերահսկողության համընդհանուր առդիտի ծրագրի շարունակական մոնիթորինգի մոտեցման (USOAP-CMA) շրջանակներում:			
76	Ուղևորահոսքերի ծավալների բաժրացում	76.1 Օդանավակայանի Կոնցեսիոների հետ իրականացնել շարունակական աշխատանքներ՝ սպասարկման որակի բարձրացման, մատուցվող ծառայությունների սակագների նվազեցման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ	Օդանավակայանը դարձնել ավիաընկերությունների և տուրիստական կազմակերպությունների համար ավելի գրավիչ և մատչելի: Այդ դեպքում ակնկալվում է, որ կբարձրանան ուղևորահոսքերի ծավալները	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտե	2025 թվականի հուլիսի 3--րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
77	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում առկա խնդիրների լուծում, սպառողներին մատուցվող	77.1 Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում գործող վարձակալության	Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների շարունակական բարելավում՝ հիմնական կատարողական ցուցանիշների (ջրամատակարարման		2021-2026 թվականներ	Վարձակալության պայմանագրով նախատեսված միջոցներ



<p>ծառայությունների որակի շարունակական բարելավում և սպառողների պահանջների բավարարում</p>	<p>պայմանագրով նախատեսված վարձատուի ու վարձակալի իրավունքների և պարտավորությունների ապահովման ուղղությամբ աշխատանքների իրականացում</p>	<p>շարունակականություն, ջրի որակ, չհաշվառվող ջուր, բաժանորդների բավարարվածություն և այլն, նորմալ գործող ստանդարտներ) ապահովում: Վարձակալության պայմանագրով յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափով բարելավում՝ ջրամատակարարման շարունակականությունը մինչև պայմանագրի ավարտը Երևան քաղաքում հասցնել մինչև 23,5 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20 ժամ/օր, ջրի որակի չափանիշները պահել ՀՀ-ում գործող ջրի որակի ստանդարտներին համապատասխան</p>			
	<p>77.2 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման գործընթացի կառավարմանն ուղղված բարեփոխումների (այդ թվում ինստիտուցիոնալ) իրականացում՝ այն ներառելով պետական լիազոր մարմնի գործառույթում</p>	<p>«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող բնակավայրերում հուսալի, կայուն և անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների ապահովում, հիմնական կատարողական ցուցանիշների սահմանում և ապահովում: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է Արագածոտնի և Տավուշի մարզերի 8 բնակավայրերում իրականացնել ջրամատակարարման</p>		<p>2021-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ Ըստ համապատասխան ներդրումների առկայության</p>

		<p>համակարգերի կառուցման համար</p> <p>նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում և շինարարական աշխատանքների իրականացում:</p> <p>2024թ. Համաշխարհային Բանկի հետ քննարկվելու է ՀՀ Արմավիրի մարզի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող մի քանի բնակավայրերում խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացման գործընթացը:</p>			
	<p>77.3 Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացում՝ ծառայությունների պատշաճ մակարդակի ապահովման համար</p>	<p>Ներդրումների իրականացման արդյունքում Վարձակալի կողմից չսպասարկվող բնակավայրերում մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավում:</p> <p>Յուրաքանչյուր տարի սուբվենցիոն ծրագրային հայտերով իրականացվող աշխատանքների արդյունքներով կբարելավվեն ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները:</p>		<p>2021-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, համայնքների բյուջեներ և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
	<p>77.4 «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների</p>	<p>Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների</p>		<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

		<p>մատուցման համար սահմանված կարգով լիցենզիայի տրամադրում և այդ բնագավառում գործունեության վերսկսման անհրաժեշտ պայմանների ստեղծում</p>	<p>մատուցման գործընթացի կանոնակարգում և բարելավում</p>			
		<p>77.5 Ջրի որակը պետական լիազոր մարմնի կողմից հաստատված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ բնակավայրերում խմելու ջրի որակի մշտական մոնիթորինգի իրականացման գործուն մեխանիզմի սահմանում</p>	<p>Սպառողներին պահանջվող որակի խմելու ջրով ապահովում: Ջրային կոմիտեն՝ ամսական կտրվածքով ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը ուղարկում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությանը՝ իր սպասարկման տարածքում գտնվող բնակավայրերում խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքում արձանագրված շեղումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով:</p>	<p>Առողջապահության նախարարություն</p>	<p>2021-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
		<p>77.6 «Աերացիա» կեղտաջրերի նոր մաքրման կայանի (ԿՄԿ) շինարարության կապալի միջազգային պայմանագրի ավարտի ապահովում, գույքի ձևավորումից հետո կայանի գործարկում և շահագործման հանձնում, ԿՄԿ-ի վերակառուցման ծրագրի</p>	<p>Երևան, Աբովյան, Նոր Հաճրն, Արզնի և այլ բնակավայրերից արտահոսող կեղտաջրերի մեխանիկական մաքրման ապահովում</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ</p>

		<p>հետագա փուլերի համար նախապատրաստական աշխատանքների իրականացում</p>	<p>Ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների բարելավում, Սևանա լիճ արտահոսող կեղտաջրերի ամբողջական մաքրում: Եվրամիության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համատեղ ֆինանսավորվող «EU4Sevan» ծրագրի շրջանակներում մասնագիտացված խորհրդատվական ընկերության ներկայացրած Սևանա լճի շրջակայքում կոյուղաջրերի ապակենտրոնացված մաքրման պիլոտային տարբերակների տեխնիկատնտեսական հիմնավորման զեկույց: Գավառի ԿՄԿ-ի համար պիլոտային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կայանը համալրել կեղտաջրերի պարզեցման HUBER ֆիրմայի կառուցվածքով, որն ավելի արդյունավետ կդարձնի կեղտաջրերի մեխանիկական մաքրման գործընթացը:</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>2024-2026 թվականներ</p>	<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ</p>
--	--	--	--	--	----------------------------	---------------------------------------

	77.8 Պետական սեփականություն հանդիսացող՝ գործող կեղտաջրի մաքրման կայաններից արտահոսող մաքրված կեղտաջրի որակի մշտադիտարկման համակարգի ստեղծում	Ջրային ավազաններում և այլ բնական տարածքներում չմաքրված կեղտաջրերի արտահոսքի հետևանքով աղտոտման վտանգի կանխարգելում	Շրջակա միջավայրի նախարարություն	2026 թվական	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ
	77.9 Կոյուղու ցանցին չմիացած տնտեսավարողների օբյեկտներում կեղտաջրերի մաքրման լոկալ կայանների տեղադրման և սպասարկման մասնագիտացված կառույցների ստեղծում	Բնակավայրերում առաջացող կեղտաջրերի մաքրման և վերաօգտագործման (հնարավորության դեպքում) ապահովում, ջրահեռացման ծառայությունների ամբողջական իրականացում Ծրագրի ընթացքը նախատեսվում է քննարկել «EU4Sevan» ծրագրի շրջանակներում:	Շրջակա միջավայրի նախարարություն	2024-2026 թվականներ	Օրենքով չարգելված այլ միջոցներ
	77.10 «Կեղտաջրերի հեռացման բնագավառի զարգացման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	Հանրապետության բնակավայրերում ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների հասանելիության ապահովում՝ կեղտաջրերի ամբողջական մաքրման և դրանց վերաօգտագործման հնարավորությունների ստեղծում		2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
	77.11 Հայաստանի Հանրապետության 6 մարզերի 11 քաղաքներում և 41 գյուղական բնակավայրերում, այդ թվում՝ Գյումրի, Վանաձոր և Արմավիր քաղաքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների շարունակական բարելավում՝ համապատասխան վարկային համաձայնագրով սահմանված ցուցանիշներին համապատասխան:		2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն/Հ

		<p>վերականգնման աշխատանքների իրականացում</p>	<p>Գերմանական KfW բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում իրականացվող աշխատանքներ՝ նորոգվող ջրագծեր՝ 163.1 կմ նորոգվող կոյուղագծեր՝ 6.5 կմ, նորոգվող տնային միացումներ՝ 5520 հատ: Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում իրականացվող աշխատանքներ՝ նորոգվող ջրագծեր՝ 87.8 կմ նորոգվող կոյուղագծեր՝ 3.5 կմ, նորոգվող տնային միացումներ՝ 2972 հատ:</p>			<p>ՆԾ (Հարևանության ներդրումային ծրագիր) միջոցների հաշվին</p>
		<p>77.12 Վարձակալի կողմից չսպասարկվող 4 գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում և շահագործման ապահովում</p>	<p>Համապատասխան վարկային համաձայնագրով սահմանված ցուցանիշներին համապատասխան ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների շարունակական բարելավում</p>		<p>2023 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետբյուջեի համաֆինանսավորմամբ Գերմանական KfW բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն/ՀՆԾ (Հարևանության ներդրումային</p>

						ծրագիր) միջոցների հաշվին
		77.13 Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքների իրականացում	Ջրամատակարարման ծառայությունների բարելավում:		2022 թվականի դեկտեմբերի 2- րդ տասնօրյակ	ՀՀ պետությունի համաֆինանսա- վորմամբ Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի Եվրամիություն/ ՀՆԾ (Հարևանության ներդրումային ծրագիր) միջոցների հաշվին Ընդհանուր արժեքը՝ 27561.1 հազ.դոլար (այդ թվում՝ 14000.0 հազ.դոլար վարկ և 7665.0 հազ դոլար դրամաշնորհ, 5896.1 հազ դոլար համաֆինանսա- վորմամբ)

78	<p>Ոռոգման ոլորտում առկա խնդիրները լուծելու և վիճակը բարելավելու նպատակով նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային բարեփոխումներ</p>	<p>78.1 «Ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագրի» մշակում և իրականացում</p>	<p>Ոռոգման համակարգի զարգացման հեռանկարային ուղիների ամրագրում: Ակնկալվում է հայեցակարգային մակարդակում սահմանել ոռոգման համակարգերի ինստիտուցիոնալ և կազմակերպչական զարգացման տեսլականը, որի հիման վրա հետագայում կմշակվի ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման ռազմավարական ծրագիրը: Այն ուղեցուցային նշանակություն կունենա երկրի մակարդակով ոռոգման համակարգերի կառավարման, պահպանության և շահագործման ջրամատակարար կազմակերպությունների համար՝ &lt;&lt;Ջրառ&gt;&gt; ՓԲ ընկերության և 15 Ջրօգտագործողների ընկերությունների համար:</p>	<p>Խորհրդատվական կազմակերպություն</p>	<p>2022-2023 թվականներ</p>	<p>Օրենքով չարգելված այլ միջոցներ, &lt;&lt; պետական բյուջե համաֆինանսավորման մասով</p>
79	<p>Ոռոգման համակարգերը շարունակաբար արդի ջրաչափական սարքավորումներով կահավորում և տվյալների հավաքման ու վերահսկողական համակարգով հագեցում</p>	<p>79.1 Հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկական, վիճակի գնահատում և վերահսկելիության բարձրացում</p>	<p>Մատակարարված ոռոգման ջրի հստակ հաշվառում իրականացնելու նպատակով ջրամատակարարման համակարգերում ջրառի կետերը, մայր ջրատարներից մինչև ներտնտեսային ցանցի բաժանարար հանգույցները ժամանակակից ջրաչափական սարքերով հագեցում, որոնք</p>		<p>2021-2023 թվականներ</p>	<p>&lt;&lt; պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով Ընդհանուր արժեքը՝ 2,646,657.8հազ.դրամ: 2021թ. նախատեսված է 787,000.0</p>



			կմիացվեն SCADA համակարգին: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսվում է տեղադրել 748 հատ ջրաչափական սարքավորումներ:			հազ.դրամ, 2022թ.` 929,828.9 հազ.դրամ 2023թ.` 908,086.7 հազ.դրամ
		79.2 Տեխնիկական, տնտեսական, կազմակերպական, ֆինանսական և իրավական բնույթի փոխկապակցված համալիր միջոցառումների իրականացման նպատակով էլեկտրոնային հարթակի ներդրում	Էլ.հարթակի ստեղծմամբ կենտրոնացված, օպերատիվ էլ.կառավարում: Ակնկալվում է ստեղծել էլեկտրոնային կառավարման սերվերային համակարգ՝ համապատասխան տեխնիկական և կադրային ռեսուրսներով համալրված, ապահովելու նպատակով 2021-2022թթ-երին տեղադրված շուրջ 1400, ինչպես նաև 2023թ-ի համար նախատեսված 748 հատ ջրաչափական սարքավորումների կենտրոնացված կառավարման նպատակով: 2024 թ-ին կմեկնարկի տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանքները	ԲՏԱ նախարարություն	2023-2025 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով
80	Ոռոգման համակարգերում շահագործման պայմանների տեխնիկական վիճակի գնահատում և բարելավում	80.1 Իրականացնել համատարած տեխնիկական աուդիտ և աուդիտի արդյունքներով մշակել և իրականացնել կապիտալ ներդրումների մոտեցումներ և չափորոշիչներ	Եվրասիական բանկի բաղադրիչ 4-ի շրջանակներում Ոռոգման համակարգերի տեխնիկական վիճակի գնահատման չափորոշիչների սահմանում 2023 թվականի դեկտեմբերի 20: UNDP-ի աջակցությամբ 2023 թվականին 2 ԶՕԸ-երում իրականացվել են պիլոտային		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով

			ծրագրեր, որոնց արդյունքներից կախված 2024 թվականին կդիտարկվեն դրանց տեղայնացումները այլ ԶՕԸ-երում:			
		80.2 Իրականացնել ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումներ և ներդրումային քաղաքականություն	Ոռոգման համակարգերի վերականգնում, կորուստների նվազեցում և հետագա երկարաժամկետ պահպանում: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված թվով 5 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացում: 2023թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված թվով 5 օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացում: 2024թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված Թալին 1 պոմպակայանի վերականգնման աշխատանքների իրականացում և թվով 21 օբյեկտների մասով նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերում: 2025-2026թթ. շինարարական աշխատանքների իրականացում:		2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջե 2024թ.՝ 550,000.0 հազ. դրամ և 122,000.0 հազ. դրամ
81	Ոռոգման համակարգերի զարգացման ծրագիր	81.1 Իրականացնել ոռոգման համակարգերի բարելավում՝ միջտնտեսային և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերակառուցում	Մինչև 2023 թվականի հունիսի 30-ը (սկսած 2018 թվականից) «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրով կառուցվել է 7 ինքնահոս համակարգ՝ 37.4 կմ ընդհանուր երկարությամբ, վերականգնվել են 5 մայր ջրանցքների 16.2 կմ	Կադաստրի կոմիտե	2022-2023 թվականներ շարունակական	ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Եվրասիական զարգացման բանկ

			<p>ընդհանուր երկարությամբ և 23 երկրորդ կարգի ջրանցքների 53.7 կմ</p> <p>ընդհանուր երկարությամբ ծայրահեղ քայքայված և վթարային հատվածները, հինգ մարզերի 105 բնակավայրերում վերականգնվել են շուրջ 262.1 կմ երկարությամբ ներտնտեսային համակարգեր: Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից դուրս է եկել 8 պոմպակայան, տարեկան կտնտեսվի 11.5 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, ոռոգելի հողատարածքներն ավելացել են 10500 հեկտարով, կբարձրանա ջրապահովվածության մակարդակը, վերականգնվող հատվածներում կորուստներն աստիճանաբար կկրճատվեն շուրջ 7%-ով, և այդ հողատարածքներում կիրականացվի կայուն, անխափան ջրամատակարարում: 2022 թվականի սեպտեմբերից մեկնարկել են երկրորդ կարգի 27 ջրանցքների շուրջ 65.8 կմ ընդհանուր երկարությամբ վթարային հատվածների և շուրջ 16.1 կմ ընդհանուր երկարությամբ ներտնտեսային ոռոգման 3 համակարգերի վերականգնման/կառուցման լրացուցիչ աշխատանքներ, որոնց ավարտը նախատեսվում է 2024 թվականի հուլիսին (առ այսօր վերակառուցվել են 44.6</p>			<p>Ծրագրի ընդհանուր արժեքը 48,000.0 հազ.ԱՄՆ դոլար (այդ թվում՝ վարկային միջոցներ 40,000.0 հազ.ԱՄՆ դոլար և 8,000.0 հազ.ԱՄՆ դոլար համաֆինանսավորում</p>
--	--	--	---	--	--	--

			<p>կմ երկրորդ կարգի և 14.0 կմ ներտնտեսային ցանցի հատվածներ):</p> <p>Լրացուցիչ աշխատանքների իրականացման արդյունքում սկնկալվում է՝ տարեկան շուրջ 3.6 մլն կՎտ/ժ</p> <p>էլեկտրաէներգիայի տնտեսում, ոռոգելի հողատարածքների ավելացում շուրջ 3000 հեկտարով:</p> <p>2024 թվականին</p> <p>կվերակառուցվեն երկրորդ կարգի ջրանցքների շուրջ 15.2 կմ ընդհանուր երկարությամբ հատվածներ:</p>			
82	<p>2021-2026 թվականների ընթացքում Ջրամբարաշինության (Կապսի և Վեդու ջրամբարներ) ծրագրերի նախապատրաստում և իրականացում</p>	<p>82.1 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 1. Կապսի ջրամբարի կառուցում</p>	<p>Մակերևութային ջրերի հոսքի կառավարում և ամբարում: Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում: Ջրածոր համայնքի վերաբնակեցվող ընտանիքների, այդ թվում՝ համայնքում աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային ապահովման ծրագրի շահառու ճանաչված 28 ընտանիքի բնակարանային խնդրի լուծումը: 2023թ. հունիսի 9-ին տրվել է «Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» պայմանագրի մեկնարկը, որով նախատեսվում է կառուցել Կապսի ջրամբարը՝ 34 մ</p>		<p>2021-2026 թվականներ</p> <p>(ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին և կավարտվի 2027 թվականին)</p>	<p>«Վ պետական բյուջեով վարկային և «Հ համաֆինանսավորման միջոցներ Գերմանիայի գարգացման վարկերի բանկ Ծրագրի ընդհանուր արժեքը 62400.0 հազ.Եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ 50000.0 հազ.Եվրո, 2000.0 հազ. Եվրո դրամաշնորհ և 10400.0 հազ.Եվրո</p>

		<p>բարձրությամբ և 25մլն մ<sup>3</sup> ծավալով:  2024թ-ին նախատեսվում է իրականացնել Հատակային և Ոռոգման թունելների վերանորոգման աշխատանքները,  2025թ-ին բարձրացնել պատվարը 26մ-ով, իսկ 2026թ-ին՝ 8մ-ով:  Այնուհետև ջրամբարի ծավալը ակնկալվում է հասցնել 60մլն մ<sup>3</sup>, որի դեպքում անհրաժեշտ կլինի պատվարը բարձրացնել ևս 18մ-ով՝ հասցնելով այն 52մ բարձրության: Այս դեպքում շինաշխատանքները կավարտվեն 2027թ-ի վերջին:  Նախատեսվում է 2023-ին 1-ին եռամսյակում սկսել Ամասիա համայնքի Ջրածոր բնակավայրի ազդակիր անձանց/տնային տնտեսությունների փոխհատուցման գործընթացը և ավարտել 2025 թվականին:</p>			համաֆինանսավորում
	<p>82.2 «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագրի» Փուլ 2. ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում</p>	<p>Ոռոգման ջրի տեղափոխում, Ջրօտագործողներին մատակարարում  Փուլ 2-ի ֆինանսական միջոցները Կապսի պատվարի շինարարությանն ուղղելու նպատակով գերմանական կողմի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Վերակառուցման վարկերի բանկի (KFW) կողմից 2023թ. կմշակվի համաձայնագրի փոփոխության նախնական տարբերակը, որը</p>		2021-2024 թվականներ	<p>ՀՀ պետական բյուջեով վարկային և ՀՀ համաֆինանսավորման միջոցներ Գերմանիայի զարգացման վարկերի բանկ Ծրագրի ընդհանուր արժեքն է 22200.0 հազ. Եվրո (այդ թվում՝ վարկային</p>

		<p>կներկայացվի հայկական կողմի դիտարկմանը:          2024 թվականին նախատեսվում է Ասիական Ջարգացման Բանկի ներգրավմամբ իրականացնել ջրամբարի 25 մլն մ<sup>3</sup>-ից 60մլն մ<sup>3</sup> ծավալի ավելացման և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորվածության ուսումնասիրությունը:</p>			<p>միջոցներ 18500.0 հազ. Եվրո և 3700 հազ. Եվրո համաֆինանսավորում)</p>
	<p>82.3 Վեդու ջրամբարի պատվարի և օժանդակ կառուցվածքների, ջրի փոխադրող և ոռոգման համակարգի շինարարական աշխատանքների իրականացում:          Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ներտնտեսային ոռոգման ցանցի մանրամասն նախագծային աշխատանքների ավարտ</p>	<p>Մակերևութային ջրերի հոսքի կառավարում: Ոռոգման ջրամատակարարման մեջ ինքնահոսի կշռի մեծացում Նախատեսվում է 2023 թվականի ընթացքում ավարտել Վեդի պատվարի և օժանդակ կառուցվածքների կառուցման (հիմնական պատվարի բարձրությունը- 85մ, իսկ երկրորդ պատվարի բարձրությունը- 17մ) աշխատանքները:</p> <p>Ծրագրի իրականացման շրջանակներում 2023 թվականին կմեկնարկեն և մինչև 2024 թվականի դեկտեմբերին կավարտվեն Վեդի ջրամբարի իշխման գոտում գտնվող շուրջ 500 հա փորձնական հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի կառուցման աշխատանքները:</p>		<p>2021-2025 թվականներ          (ծրագիրը մեկնարկել է 2017 թվականին)</p>	<p>«Այտական բյուջեով վարկային և «Համաֆինանսավորման միջոցներ Ֆրանսիայի Հանրապետության և կառավարության աջակցություն Ծրագրի ընդհանուր արժեքն է՝ 90003.63 հազ. Եվրո (այդ թվում՝ վարկային միջոցներ՝ 75003.63 հազ. Եվրո և 15000.0 հազ. Եվրո համաֆինանսավորում)</p>

83	<p>Ոռոգման համակարգերի սպասարկման տարածքում ընդգրկված և լրացուցիչ ոռոգելի հողերի ջրամատակարարման համար անհրաժեշտ ջրի քանակի ապահովման հնարավորությունների ստեղծում, ինքնահոս համակարգերի և նոր ջրամբարների նախագծում և շինարարություն</p>	<p>83.1 Գեղարքունիքի մարզում Արգիճիի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 6,5մլն.մ<sup>3</sup>      ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 268 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով:      Արդյունքում կխնայվի շուրջ 1 մլն կվտ/ժ էլեկտրոգիա, կավելանան նաև շուրջ 3122 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 9,3 մլն մ<sup>3</sup> ջուր:      2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար:      2025 թվականին նախատեսվում է ունենալ նախագծանախահաշվային փաստաթղթերը և ՇՄԱԳ-ը:</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն, Քաղաքաշինության կոմիտե, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (համաձայնությամբ)</p>	2021-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով
		<p>83.2 Գեղարքունիքի մարզում Աստղածորի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 1,25մլն.մ<sup>3</sup> ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանում կառուցվող ջրամբարի իշխման տարածքում գտնվող և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 360 հա հողատարածքները կոռոգվեն ինքնահոս եղանակով:      Արդյունքում կխնայվի շուրջ 1,9 մլն կվտ/ժ էլեկտրոգիա:</p>		2021-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով

			<p>Ջրամբարի կառուցմամբ կավելանան նաև շուրջ 1080 հա հողատարածքներ, որոնց տարեկան ջրապահանջարկը կկազմի շուրջ 3,3 մլն մ<sup>3</sup> ջուր: 2023 թվականից կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար: 2024 թվականին նախատեսվում է ունենալ նախագծանախահաշվային փաստաթղթերը և ՇՄԱԳ-ը:</p>			
		<p>83.3 Վայոց ձորի մարզում Ելփինի ջրամբարի կառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և կառուցում</p>	<p>Ծավալը 0.8 մլն.մ<sup>3</sup>          ՀՀ Վայոց ձորի մարզում կառուցվող ջրամբարի կառուցման արդյունքում կապահովվի 400 հա հողատարածքների ջրապահովվածությունը և կտնտեսվի շուրջ 0.5 մլն կվտ/ժ էլեկտրոգիա:          2023 թվականից, ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կմեկնարկեն նախագծային աշխատանքները, որոնք հիմք կհանդիսանան ջրամբարի կառուցման ծրագրի իրականացման հետագա ընթացքի համար: 2024 թվականին նախատեսվում է ունենալ նախագծանախահաշվային փաստաթղթերը և ՇՄԱԳ-ը:</p>		<p>2022-2026 թվականներ</p>	<p>ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցներով</p>



15	Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի 2024-2026 և 2027-2029 թվականների հարկման բազաների ձևավորում	15.1 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրում համայնքային էլեկտրոնային կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի 2024-2026 թվականների հարկման բազաների ձևավորում, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2024-2026 թվականների անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը	-	2023 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
		15.2 2026 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունները տվյալների փոխանակման փոխգործելիության հարթակի միջոցով՝ ինքնաշխատ եղանակով տրամադրում համայնքային էլեկտրոնային	Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի 2027-2029 թվականների հարկման բազաների ձևավորում, ինչը տեղական ինքնակառավարման մարմիններին հնարավորություն կտա հաշվառելու և իրականացնելու 2027-2029 թվականների	-	2026 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		կառավարման միասնական հարթակի (ՀԷԿՄՀ) օպերատորին	անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը			
16	Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում	16.1 «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունում	«Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» ՀՀ կառավարության որոշման հաստատում, որի նորացված և ճշտված տվյալներից կկարողանան օգտվել շահագրգիռ բոլոր պետական մարմինները, կազմակերպություններն ու անձինք	-	Յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 3-րդ տասօրյակ	Ֆինանսավորում չի պահանջվում
17	Կադրային բանկի համալրում	17.1 Համագործակցություն ոլորտային կրթական ծրագրեր իրականացնող բուհերի հետ, կրթական ծրագրերի վերանայում, լաբորատորիաների ստեղծում	Կադաստրի կոմիտեի զարգացման ծրագրի միջոցառումներից բխող ոլորտային բարձր որակավորում ունեցող կադրերի ներգրավում, որի արդյունքում Կադաստրի կոմիտեն կհամալրվի գիտության և տեխնիկայի պահանջները բավարարող և բանիմաց մինչև 25 երիտասարդ կադրերով, ովքեր համապատասխան մասնագիտական գիտելիքներ և հմտություններ կստանան համատեղ ստեղծված գիտակրթական լաբորատորիաներում: 2023 թվականին միջոցառման շրջանակներում 250 պրակտիկանտ մասնագիտական պրակտիկան կանցկացնի Կադաստրի կոմիտեում	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2022-2026 թվականներ	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ 50.0 մլն ՀՀ դրամ

**Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտե**

NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի նոր իրավահարաբերությունների կարգավորում	«Ատոմային էներգիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերի («Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին» կոնվենցիայի փոփոխություն, «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին» համատեղ կոնվենցիա) պահանջների ամրագրում, ԱԷՄԳ-ի առաքելությունների առաջարկությունների ներառում, օրենքի՝ Եվրամիության՝ «Միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության գծով Համայնքի համակարգի սահմանումը» 2009/71/ 25. 06. 2009 և «Աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների պատասխանատու ու անվտանգ կառավարման գծով Համայնքի	-	2025թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Պահպանման ծախսեր, պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			իրավական համակարգի սահմանումը» 2011/70/ 19 07 2011 դիրեկտիվների մոտարկում			
2	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում Եվրամիության դիրեկտիվների («Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի մասով առողջության պահպանմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» 2013/51/ 22. 10. 2013) և ԱԷՄԳ անվտանգության ստանդարտների պահանջներին	«Սպառման համար նախատեսված ջրում ռադիոակտիվ նյութերի թույլատրելի սահմանաքանակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Բնակչության, անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իրնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից	-	2026թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ	Պահպանման ծախսեր, պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
3	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում Եվրամիության դիրեկտիվների («Իրնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից պաշտպանության անվտանգության հիմնական ստանդարտները սահմանելու մասին» 5.12. 2013/59/, 89/618	«Իրնացնող ճառագայթման անվտանգության և իրնացնող ճառագայթումից պաշտպանության անվտանգության պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իրնացնող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից	-	2026թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Պահպանման ծախսեր, պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	90/641. 96/29/, 97/43 և 2003/122/) և ԱԷՄԳ անվտանգության ստանդարտների պահանջներին					
4	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում Եվրամիության դիրեկտիվների («Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքումը ստուգելու և վերահսկելու մասին» 2006/117 20.11. 2006) և ԱԷՄԳ անվտանգության ստանդարտների պահանջներին	«Ռադիոակտիվ թափոնների և աշխատած վառելիքի առաքման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ Վարչապետի աշխատակազմ ներկայացնելը	Բնակչության, ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների անձնակազմի անվտանգության ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունն իրենց նող ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից	-	2026թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ	Պահպանման ծախսեր, պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

Պետական եկամուտների կոմիտե						
N/N	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	6	7	8
1	Էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացում	1.1 Վերլուծական գործիքների կատարելագործում և ավտոմատացում	Ստանդարտ վերլուծությունների ավտոմատացված եղանակով իրականացվող գործիքների ընդլայնում և ներդրում:  Արդյունքում գործում են 59 ստանդարտ վերլուծական		2021-2026թթ. (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)

			<p>հաշվետվական ձևեր և առնվազն 66 ռիսկային չափանիշներ: 2023թ. Գործող ստանդարտ վերլուծական հաշվետվական ձևերի քանակ 49, և ռիսկային չափանիշներ 66 2024թ. Գործող ստանդարտ վերլուծական հաշվետվական ձևերի քանակ 53 2025թ. Գործող ստանդարտ վերլուծական հաշվետվական ձևերի քանակ 56 2026թ. Գործող ստանդարտ վերլուծական հաշվետվական ձևերի քանակ 59</p>			
			<p>Հարկային մարմնում առկա և ստացվող տեղեկատվության հիման վրա վերլուծական կարողությունների ընդլայնում:</p> <p>Արդյունքում ռիսկային չափանիշների ավելացման միջոցով ծանուցվող հարկ վճարողների շրջանակը կընդլայնվի՝ առնվազն 40%-ով: Նախատեսվում է ինքնաշխատ ծանուցման համակարգում ռիսկայնության գնահատման չափանիշների ավելացման միջոցով ծանուցվող հարկ վճարողների շրջանակը ընդլայնել</p>		<p>2021-2026թթ. (շարունակական)</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (15.0 մլն դրամ)</p>

		<p>2023թ.-ին՝ 2019թ.-ի համեմատ աճել է 30,0 %-ով,  2024թ.-ին՝ 2019թ.-ի համեմատ աճել է 35,0 %-ով,  2025թ.-ին՝ 2019թ.-ի համեմատ աճել է 38,0 %-ով,  2026թ.-ին՝ 2019թ.-ի համեմատ աճել է 40,0 %-ով:</p>			
	<p>1.2 Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի գործարկում</p>	<p>Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի գործարկմամբ գործընթացի ավտոմատացում, ուսումնասիրության համար վերադարձի ժամկետների կրճատում և մարդկային ռեսուրսների նվազեցում:</p> <p>Արդյունքում հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի գործընթացը ավտոմատացված է: Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձը կկատարվի 2-ից 5 աշխատանքային օրվա ընթացքում:</p>	<p>Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Կադաստրի կոմիտե</p> <p>«ԱԲՌԱ քրեդիտ ռեփորթինգ» ՓԲԸ (համաձայնությամբ)</p>	<p>2021-2023թթ. (շարունակական)</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (100.0 մլն դրամ)</p>
	<p>1.3 Մաքսային և այլ վճարների գանձման համակարգերի բարելավում</p>	<p>Մաքսային վճարների և մաքսային մարմինների կողմից գանձվող այլ վճարների էլեկտրոնային եղանակով</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2021թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ</p>



		<p>վճարման համակարգի մշակում և ներդրում:</p> <p>Արդյունքում մաքսային վճարների գանձման համակարգը արդիականացված է: ՀՀ գանձապետարանի հետ վճարված գումարների նույնականացման և հաստատման ձևաչափը 100%-ով թվայնացված է: Արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների առնվազն 50%-ը մաքսային և այլ վճարների վճարումն իրականացնում է առցանց եղանակով:</p>			(100.0 մլն դրամ)
	<p>1.4 Հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգերի բջջային հավելվածների ներդրում</p>	<p>Համակարգերից օգտվողների շրջանակի ընդլայնում և հարկ վճարողների, մասնավորապես ՓՄՁ սուբյեկտների համար հարմարավետ էլեկտրոնային գործիքների ներդրմամբ փաստաթղթաշրջանառության պարզեցում:</p> <p>Արդյունքում մշակված են և գործում են՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Ֆիզիկական անձանց մատուցվող էլեկտրոնային ծառայությունների նոր հարթակ և բջջային հավելված,</li> <li>2. Հարկային հաշվարկների և հաշվետվությունների</li> </ol>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (700.0 մլն դրամ)</p>

		ներկայացման հարթակի բջջային հավելված, 3. Հարկային հաշիվների դուրս գրման նոր WEB հարթակ և բջջային հավելված:			
	1.5 Երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների մշակման էլեկտրոնային համակարգերի կատարելագործում	Երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների՝ շարժական գույքի սեփականատերերի և վերջիններիս փոփոխությունների վերաբերյալ էլեկտրոնային համակարգում տեղեկատվության հասանելիության ապահովում:  Արդյունքում մշակված և ներդրված են շարժական գույք հաշվառող մարմիններից տվյալների ստացման WEB համակարգերը:	Ոստիկանություն  Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Քաղաքացիական ավիացիայի կոմիտե  «ԷԿԵՆԳ» ՓԲԸ	2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (50.0 մլն դրամ)
	1.6 Մեծ Ծավալի Տվյալների (Big Data) ժամանակակից կառուցվածքով տվյալների շտեմարանների մշակման գործիքների ստեղծում, գործիքակազմի ընդլայնում և զարգացում	Անալիտիկ-վերլուծական հաշվետվությունների ներդրում, տվյալների վերլուծության ժամանակակից գիտական տեխնոլոգիաների կիրառում (data analysis) հարկային թիրախային վարչարարության իրականացման նպատակով:  Արդյունքում ՊԵԿ հարկային համակարգի բոլոր աշխատակիցներն օգտագործում են այդ գործիքները և առնվազն 5 գերատեսչություն օգտվում են ծրագրավորված հաշվետվություններից:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)

		<p>1.7 Ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով համակարգերի մշակում</p>	<p>Տեղեկատվական հոսքերի կառավարման և վերլուծությունների համակարգի ներդրում:</p> <p>Արդյունքում ինքնաուսուցանվող (machine-learning) արհեստական ինտելեկտով տարրերը ներդրված են «Ստուգման ենթակա հարկ վճարողներ», «Ապրանքների հետազոծելիություն» համակարգերում:</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (380.0 մլն դրամ)</p>
		<p>1.8 Էլեկտրոնային կառավարման համակարգերի հնարավորությունների հզորացում և կատարելագործում</p>	<p>Էլեկտրոնային կառավարման համակարգերի աշխատանքի հնարավորությունների հզորացում և կատարելագործում, համակարգի անխափան աշխատանքի ապահովում: Ծրագրի ավարտին հարկային վարչարարության արդյունավետության ցուցանիշի 0.5-ից 0.7 տոկոսային կետով բարելավում:</p> <p>Արդյունքում ներդրված է և գործում է նոր սերվերային համակարգ, էլեկտրոնային համակարգերը աշխատում են անխափան 24/7 ռեժիմով:</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (500.0 մլն դրամ)</p>

		<p>1.9 Հաշվարկային փաստաթղթերում (հարկային հաշիվներ, ՀԴՄ կտրոններ և այլն) արտացոլվող տվյալների արտաձման հնարավորության ապահովում</p>	<p>Հաշվարկային փաստաթղթերի տվյալների հիման վրա հարկ վճարողների կողմից իրացվող ապրանքների գների համեմատության և դրա արդյունքներով գնային խախտումներ թույլ տվող ռիսկային հարկ վճարողների վերհանման հնարավորության ապահովում:</p> <p>Արդյունքում համակարգը ներդրված է:</p>		<p>2021թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (50.0 մլն դրամ)</p>
		<p>1.10 Ապրանքների և տրանսպորտային միջոցների ինքնաշխատ բացթողման էլեկտրոնային համակարգի ներդրում (ավտոմատ բացթողում)՝ առանց մաքսային մարմինների գտնվելու վայրեր այցելության</p>	<p>Մաքսային գործառնությունների իրականացման վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատում:</p> <p>Արդյունքում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգը արդիականացված է:</p> <p>Ապրանքային հայտարարագրերի առնվազն 30%-ը բաց են թողնվում ինքնաշխատ եղանակով ավտոմատ էլեկտրոնային համակարգի միջոցով:</p> <p>Ապրանքային հայտարարագրերի բացթողնման ժամանակը կրճատված է առնվազն 70%-ով:</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (50.0 մլն դրամ)</p>

		<p>1.11 «Մաքսային միասնական հաշիվ» համակարգի ներդրում</p> <p>Մաքսային պարտավորություններ ստեղծող էլեկտրոնային համակարգերի հնարավորությունների էական ընդլայնում, թվայնացում, ինտեգրում ՎԿՀ համակարգին:</p> <p>Արդյունքում մաքսային վճարների հաշվառման, գանձման համակարգը արդիականացված է, մաքսային գործընթացների համար ծախսվող ժամանակը կրճատված, «Մաքսային միասնական հաշիվ» համակարգը ներդրված:</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2026թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>Համաշխարհային Բանկի կողմից ՀՀ Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագրի (ՊՀԱԾ 4) (700.0 մլն դրամ)</p>
		<p>1.12 Ուղևորային հայտարարագիր և դրա բջջային հավելվածի ներդրում</p> <p>Ուղևորային հայտարարագրի թվայնացված էլեկտրոնային տարբերակ: Արդյունքում գործում է ուղևորային հայտարարագրի ներկայացման էլեկտրոնային համակարգը:</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե (70.0 մլն դրամ)</p>
		<p>1.13 Ռեզիդենտության սերտիֆիկատի տրամադրման ավտոմատացում</p> <p>Ռեզիդենտության սերտիֆիկատի տրամադրման էլեկտրոնային համակարգ:</p> <p>Արդյունքում ռեզիդենտության տեղեկանքը տրամադրվում է բացառապես ինքնաշխատ:</p> <p>2024 Կազմակերպությունների ռեզիդենտության սերտիֆիկատի տրամադրում էլեկտրոնային եղանակով 2025</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե (20.0 մլն դրամ)</p>

			Ֆիզիկական անձանց ռեզիդենտության սերտիֆիկատի տրամադրում էլեկտրոնային եղանակով			
		1.14 Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցություն	Ավտոմատ տեղեկատվության փոխանակում Գլոբալ Ֆորումի մասնակից երկրների հետ:  Առկա է ավտոմատ տեղեկատվության փոխանակման համակարգը:		2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե (250 մլն դրամ)
		1.15 Ֆիզիկական անձանց հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում տաքսի ծառայության ոլորտի կարգավորում	Տաքսի ծառայություն մատուցող ֆիզիկական անձանց համար հարկային մարմնում հաշվառվելու և հաշվետվություններ ներկայացնելու համակարգ:  Գործում է տաքսի ծառայությունների հաշվառման համակարգ:		2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե (200.0 մլն դրամ)
2	Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում և մատուցվող ծառայությունների ընդլայնում	2.1 Համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ հարկային մարմնի և հարկ վճարողների ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորության ապահովում	Ստուգումներին և ուսումնասիրություն ներին վերաբերող բոլոր փաստաթղթերի փոխանակում էլեկտրոնային եղանակով և անձնական գրասենյակի միջոցով:  Արդյունքում համակարգը ներդրված է:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2023թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (30.0 մլն դրամ)

		<p>Հարկ վճարողին փաստաթղթերի ներկայացման գործընթացի վրա ծախսվող ժամանակը կրճատված է առնվազն 10 աշխատանքային օրով:</p>			
	<p>2.2 Մաքսային հայտարարագրերի և ծանուցումների կառավարման նոր ենթահամակարգի մշակում և ներդրում</p>	<p>Ծանուցումների կառավարման ենթահամակարգի ներդրման շնորհիվ տնտեսավարող սուբյեկտների կողմից մաքսային մարմին այցելությունների և մաքսային մարմին-տնտեսավարող շփման նվազեցում, ծախսվող ժամանակի և գործողությունների ծավալի կրճատում: Մինևույն ժամանակ հայտարարագրերի կառավարման ենթամոդուլի ներդրմամբ՝ առկա աշխատանքների և ռեսուրսների կառավարման արդյունավետության էական բարձրացում:</p> <p>Արդյունքում համակարգը ներդրված է: Բոլոր մաքսային հայտարարագրերը կառավարվում են տվյալ համակարգի միջոցով:</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p>	<p>2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)</p>
	<p>2.3 Օրինապահ հարկ վճարողների համակարգի կատարելագործում</p>	<p>Հարկ վճարողների բարեխիղճ և օրինապահ վարքագծի խրախուսում, նրանց համար պարզեցված հարկային և մաքսային ընթացակարգերի ընդլայնում և ներդրում՝ ապահովելով հարկ</p>		<p>2022-2026թթ. (շարունակական)</p>	<p>ՀՀ պետական բյուջե (7.0 մլն դրամ)</p>

			<p>վճարողների կողմից հարկային պարտավորությունները կամավորությամբ կատարելու սկզբունքի արմատավորումը և պետություն-հարկ վճարող գործընկերային հարաբերությունների առավել ամրապնդումը, որպեսզի հարկ վճարելը դիտվի ոչ միայն որպես պարտավորություն, այլ նաև գնահատվի և լինի առավել գրավիչ:</p> <p>Արդյունքում օրինապահ հարկ վճարողի հավաստագիր ստացած սուբյեկտների քանակն ավելացել է առնվազն 30%-ով:</p> <p>2023թ.-ին 2021թ.-ի նկատմամբ աճել է 15%-ով:</p> <p>2024թ.-ին 2021թ.-ի նկատմամբ աճել է 20%-ով:</p> <p>2025թ.-ին 2021թ.-ի նկատմամբ աճել է 25%-ով:</p> <p>2026թ.-ին 2021թ.-ի նկատմամբ աճել է 30%-ով:</p>			
	<p>2.4 ՊԵԿ մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում</p>	<p>Հարկային և մաքսային ծառայողների ընտրության, նշանակման, վերապատրաստման նոր ներառական համակարգը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին:</p> <p>Արդյունքում համապատասխան նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ</p>		<p>2026թ դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>		<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (135.0 մլն դրամ)</p>



			<p>փոփոխությունները կատարված են:</p>			
		<p>2.5 Հարկ վճարողների իրազեկման և ուսուցման համակարգի շարունակական կատարելագործում</p>	<p>Հարկային և մաքսային օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում:  Հարկային և մաքսային օրենսդրության վերաբերյալ հարկ վճարողների համար յուրաքանչյուր տարի ապահովված է նվազագույնը 600 ակ/ժամ դասընթաց:  2023թ. նվազագույնը 600ակ/ժամ:  2024թ. նվազագույնը 600ակ/ժամ:  2025թ. նվազագույնը 600ակ/ժամ:  2026թ. նվազագույնը 600ակ/ժամ:  Յուրաքանչյուր տարի ԶԼՄ-ներով, ՊԵԿ պաշտոնական կայքով, սոցիալական հարթակներով կամ այլ եղանակներով հանրային իրազեկման առնվազն 20 միջոցառման իրականացում:  2023թ. առնվազն 20 միջոցառում:  2024թ. առնվազն 20 միջոցառում:  2025թ. առնվազն 20 միջոցառում:  2026թ. առնվազն 20 միջոցառում:</p>		<p>2021-2026թթ. (շարունակական)</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>

		<p>2.6 Հարկային և մաքսային վարչարարության ընթացակարգերի վերաբերյալ հարցումների կազմակերպում</p>	<p>Իրականացվող հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ հարկ վճարողների դիրքորոշման գնահատում:</p> <p>Առնվազն 2 տարին մեկ անգամ հարկ վճարողների դիրքորոշման վերաբերյալ հարցումների իրականացում: 2023թ.</p> <p>Հարկ վճարողների դիրքորոշման վերաբերյալ հարցումների իրականացում: 2024թ.</p> <p>Հարկ վճարողների դիրքորոշման վերաբերյալ հարցումների իրականացում: 2025թ.</p> <p>Հարկ վճարողների դիրքորոշման վերաբերյալ հարցումների իրականացում: 2026թ.</p>		<p>2022-2026թթ. (շարունակակա ն)</p>	<p>Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (75.0 հազ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ)</p>
		<p>2.7 Օրենսդրությամբ սահմանված կարգով միասնական հաշվին մուտքագրման ենթակա՝ փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետների կրճատում</p>	<p>Վարչարարական բեռի թեթևացում:</p> <p>Օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման միջին ժամկետների տարեկան 5%-ով կրճատում:</p>		<p>2021-2023թթ. (շարունակակա ն)</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում</p>
		<p>2.8 Հարկային և մաքսային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի և երևույթների</p>	<p>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում, կոռուպցիայի դեմ արդյունավետ և ներառական</p>		<p>2021-2023թթ. (շարունակակա ն)</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված</p>

		բացահայտում և կանխարգելում	պայքարի գործիքակազմի առկայություն:  Կոռուպցիոն երևույթներ պարունակող բոլոր ահազանգերով տեղեկություններն ամբողջությամբ ստուգված են:			Ֆինանսավորման աղբյուրներ (25.0 մլն դրամ)
		2.9 Մաքսային ձևակերպումների ժամանակակից կենտրոնի ստեղծում	Մաքսային գործընթացների ծախսատարությունը և ժամանակատարությունը նվազեցված է:  Արդյունքում հաստատված է մաքսային ձևակերպումների կենտրոնների աշխատանքի տեսլականն ամբողջ ՀՀ տարածքում և ստեղծված է մաքսային ձևակերպումների ժամանակակից առնվազն մեկ կենտրոն:		2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (14.0 մլրդ դրամ)
3	Հարկային հսկողության ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործմամբ ստվերի կրճատում	3.1 Տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող գործունեության օրինականության կամ գործարքների լիարժեք փաստաթղթավորման կարգապահության բարելավում, հսկողական գործիքակազմի կատարելագործում	Ստվերային տնտեսության կրճատում, հարկային կարգապահության բարձրացում, հարկային եկամուտների ավելացում, որի արդյունքում, ծրագրի իրականացման ավարտին Հարկեր/ ՀՆԱ ցուցանիշն այլ հավասար պայմաններում կբարելավվի շուրջ 2.6 տոկոսային կետով:  Յուրաքանչյուր տարի նախորդ տարվա համեմատ դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի քանակի առնվազն 7 % և		2021-2026թթ. (շարունակական)	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			<p>իրացման շրջանառության առնվազն 10 % աճ:  2023թ.-ին 2022թ.-ի նկատմամբ դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի քանակը աճել է առնվազն 7 %-ով, իսկ իրացման շրջանառությունը 10 %-ով:  2024թ.-ին 2023թ.-ի նկատմամբ դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի քանակը աճել է առնվազն 7 %-ով, իսկ իրացման շրջանառությունը 10 %-ով:  2025թ.-ին 2024թ.-ի նկատմամբ դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի քանակը աճել է առնվազն 7 %-ով, իսկ իրացման շրջանառությունը 10 %-ով:  2026թ.-ին 2025թ.-ի նկատմամբ դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի քանակը աճել է առնվազն 7 %-ով, իսկ իրացման շրջանառությունը 10 %-ով:</p>			
		<p>3.2 Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծում իրականացնող հարկ վճարողների հարկային կարգապահության</p>	<p>Ստվերային տնտեսության կրճատում, հարկային կարգապահության բարձրացում, հարկային եկամուտների ավելացում:</p> <p>Եվրասիական տնտեսական միության անդամ</p>		<p>2021-2026թթ. (շարունակական)</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (300.0 մլն դրամ)</p>

		<p>բարելավում և հսկողական գործիքի կատարելագործում</p>	<p>պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծումների նվազագույնը 20%-ն ուսումնասիրված են: 2023թ.  նախատեսվում է առնվազն 20% ներմուծումների ուսումնասիրություն: 2024թ.  նախատեսվում է առնվազն 20% ներմուծումների ուսումնասիրություն: 2025թ.  նախատեսվում է առնվազն 20% ներմուծումների ուսումնասիրություն: 2026 թվականին  նախատեսվում է առնվազն 20% ներմուծումների ուսումնասիրություն:</p>			
	<p>3.3 Հարկային պարտավորությունների հաշվարկման մեխանիզմների կատարելագործում</p>	<p>Հարկերի հաշվարկման անուղղակի եղանակների կատարելագործում և միջազգային փորձին համապատասխան հարկային պլանավորման չարաշահման կանխարգելման կանոնների ներդրում:</p> <p>Արդյունքում համապատասխան օրենսդրական ակտերն ընդունված են:</p>	<p>Ֆինանսների նախարարություն</p>	<p>2022թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>		<p>Լրացուցիչ ֆինանսական միջոցներ չի պահանջվում</p>
		<p>Տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կատարելագործում:</p>			<p>2022-2025թթ. (շարունակական)</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ</p>

			<p>Արդյունքում տրանսֆերային գնագոյացմանն առնչվող ենթաօրենսդրական ակտերը և ուղեցույցերն ընդունված են: 2023թ.-ին բոլոր իրավական ակտերն արդեն իսկ ընդունված են և իրավական ակտերում անհրաժեշտության դեպքում հնարավոր է կատարվեն փոփոխություններ և լրացումներ՝ տրանսֆերային գնագոյացման կարգավորումների կատարելագործման նպատակով:</p> <p>Նույն ժամանակահատվածում ներդրվում և կիրառվում է տրանսֆերային գնագոյացման ռիսկերի վերհանման և գնահատման համակարգը, որը նպաստում է տրանսֆերային գնագոյացման վարչարարության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:</p> <p>2024թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ են մտած թվով 2 իրավական ակտեր (&lt;&lt; ՊԵԿ նախագահի 09.09.2022թ. «Նախնական գնագոյացման պայմանավորվածության ձեռքբերման կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 943-Լ և &lt;&lt; ՊԵԿ նախագահի 09.09.2022թ. «Երկրների միջև փոխանակվող</p>			<p>(տարեկան 100.0 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք &lt;&lt; դրամ)</p>
--	--	--	---	--	--	--

		<p>հաշվետվության ձևն ու լրացման կարգը սահմանելու մասին» թիվ 939-Լ հրամանները), որոնցով կբարելավվեն հարկ վճարող-հարկային մարմին փոխհարաբերությունները և հարկային վարչարարության իրականացման արդյունավետության մակարդակը կբարձրանա:</p> <p>2025թ. արդեն իսկ գործող տրանսֆերային գնագոյացման կարգավորումները արդյունավետ կիրառվում են:</p>			
	<p>3.4 Ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի ոլորտային հարկային պոտենցիալի գնահատման համակարգի կատարելագործում՝ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ համագործակցությամբ՝ վերջինիս կողմից տրամադրվելիք հնարավոր տեխնիկական աջակցության շրջանակներում</p>	<p>Ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով՝ տնտեսական գործունեության ոլորտների հարկային պոտենցիալի և հարկային վարչարարության ճեղքի գնահատում:</p> <p>Արդյունքում ըստ ոլորտների ավելացված արժեքի հարկի, շահութահարկի և եկամտային հարկի գծով հարկային ճեղքի գնահատականն ուղարկված է ՀՀ ֆինանսների նախարարություն:</p>		2021-2023թթ.	<p>Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ</p>
	<p>3.5 Ռիսկերի կառավարման համակարգերի վերանայում և կատարելագործում</p>	<p>Համալիր հարկային ստուգումների ընտրողականության</p>		2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված</p>

			<p>էլեկտրոնային համակարգի վերանայում:</p> <p>Արդյունքում ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրողականության էլեկտրոնային ավտոմատ կառավարման համակարգում վերանայված ռիսկային չափանիշների և ժամանակակից վերլուծական գործիքների հիման վրա համապատասխան ծրագրային փոփոխությունները գործարկված են:</p>			<p>Ֆինանսավորման աղբյուրներ (100.0 մլն դրամ ըստ ՊԵԿ ռազմավարության մբ սահմանված ժամանակացույցի )</p>
4	<p>Մաքսային ռիսկերի կառավարման գործիքակազմի կատարելագործմամբ մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում</p>	<p>4.1 Մաքսային հսկողության գործիքակազմի կատարելագործում և պարզեցում</p>	<p>Ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության համակարգի ավտոմատացում:</p> <p>Արդյունքում ապրանքների բացթողումից հետո իրականացվող մաքսային հսկողության ավտոմատացված համակարգը գործարկված է:</p>		<p>2025թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (90.0 մլն դրամ)</p>
		<p>4.2 Մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերի ներդաշնակեցում</p>	<p>Մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերի ինտեգրում, համադրելիության մոդելի ձևավորում, հարկային և մաքսային մեծածավալ շտեմարանների տվյալների համադրման և վերլուծության արդյունքում տնտեսավարող սուբյեկտների ճիշտ թիրախավորում:</p>		<p>2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (150.0 մլն դրամ)</p>



			Արդյունքում մաքսային և հարկային ռիսկերի կառավարման համակարգերն ինտեգրված են:			
	4.3 «Մաքսային իրավախախտումների միասնական շտեմարան» համակարգի ներդրում	Մաքսային ոլորտում իրավախախտում թույլ տված տնտեսավարողների թիրախավորում: Արդյունքում համակարգը ներդրված է և ներդաշնակեցված է «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի «Ռիսկերի կառավարում» համակարգի հետ: ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կիրառվող ձևաթղթերը, ակտերը և արձանագրությունները թվայնացված են:		2023թ. մարտի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (35.0 մլն դրամ)	
	4.4 Փոստային (սուրհանդակային) առաքանիների հետ կապված մաքսային գործառնությունների կանոնակարգման նպատակով ռիսկի ցուցիչների մշակում՝ անձնագրային և ՀԾՀ տվյալների միջոցով սահմանահատումների հաճախականության ռիսկի ցուցիչի ձևավորում, ապրանքների քաշի և սահմանահատումների հաճախականության	Ռիսկի ցուցիչների հիման վրա ներմուծվող առաքանիների՝ ըստ անձնական կամ ոչ անձնական օգտագործման դասակարգում, քաղաքացիների հետ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ֆիզիկական շփման նվազեցում:  Արդյունքում ռիսկի ցուցիչների հիման վրա ներմուծվող առաքանիները հնարավոր կլինի դասել անձնական	Ազգային անվտանգության ծառայություն	2022թ. հունիսի 1-ին տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (30.0 մլն դրամ)	

		տվյալների հիման վրա ռիսկի ցուցիչի մշակում	օգտագործման կամ ոչ անձնական օգտագործման, քաղաքացիների հետ մաքսային մարմնի պաշտոնատար անձանց ֆիզիկական շփումը կհասցվի նվազագույնի: Փոստային (սուրհանդակային) առաքանիներից գանձվող մաքսային վճարների ավելացում առնվազն ոչ անձնական օգտագործման փոստային առաքանիների ներմուծման ծավալի աճի չափով:			
5	«Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի կատարելագործում	5.1 Կշռման համակարգի տվյալների օգտագործման նոր մոդելի մշակում, ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող կշեռքների կենտրոնացված համակարգի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին	Կշռման համակարգի ծրագրային ապահովման բարելավում:  Արդյունքում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգի հետ կշռման համակարգն ինտեգրված է: Բոլոր կշռումներն իրականացվում են ներդրված համակարգի միջոցով:		2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (30.0 մլն դրամ)
		5.2 Մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի տրամադրման էլեկտրոնային համակարգի ներդրում	Մաքսային գործառնությունների իրականացման վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատում:  Արդյունքում մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի տրամադրման	Ֆինանսների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Առողջապահության նախարարություն	2022թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

			<p>էլեկտրոնային համակարգը ներդրված է: Մաքսային գործառնությունների իրականացման համար միայն էլեկտրոնային եղանակով թույլատվական փաստաթղթերի տրամադրումը կազմում է ընդհանուրի առնվազն 70 %-ը:</p>	<p>Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Պաշտպանության նախարարություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>Ազգային անվտանգության ծառայություն</p> <p>Ոստիկանություն</p> <p>Մենդամթերքի անվտանգության տեսչական մարմին</p>		
	<p>5.3 ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերի ինտեգրում «ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին</p>	<p>Մաքսային գործառնությունների իրականացման վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատում:</p> <p>Արդյունքում ՀՀ պետական սահմանի անցման կետերում գործող այլ համակարգերը ինտեգրված են «ՀՀ արտաքին</p>	<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն</p> <p>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</p>	<p>2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ</p>		<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (35.0 մլն դրամ)</p>

		առևտրի ազգային մեկ պատուհան» համակարգին: Մաքսային հսկողության իրականացման վրա ծախսվող ժամանակահատվածը կրճատված է 10 %-ով:			
	5.4 ՀՀ ՊԵԿ և ՀՀ ԱԱԾ կողմից առկա հսկողական գործիքների համատեղ օգտագործում՝ ՀՀ արտաքին առևտրի ազգային մեկ պատուհանի և ՍԷԿՏ համակարգերի ինտեգրում:	Բարձր ռիսկային խմբում գտնվող ֆիզիկական անձանց սահմանահատումների վերահսկելիության մակարդակի բարձրացում՝ «խելացի» ռիսկերի կառավարման համակարգի ներդրման միջոցով:  Արդյունքում համակարգերն ինտեգրված են: Ներդրված համակարգի միջոցով ֆիզիկական անձանց սահմանահատումների ժամանակ իրականացվում է թիրախավորված հսկողության:	Ազգային անվտանգության ծառայություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (42.0 մլն դրամ)
	5.5 «Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի վերջնական ներդրման համար անհրաժեշտ հիմնական կառավարման էլեկտրոնային համակարգերի արդիականացում, նոր համակարգերի մշակում և ներդրում	«Մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի վերջնական ներդրման համար անհրաժեշտ հիմնական կառավարման էլեկտրոնային համակարգերի արդիականացում և գործարկում, որով կպարզեցվի մաքսային սահմանի անցման գործընթացը՝ նպաստելով նաև ներդրումային գրավչության բարձրացմանը:  Արդյունքում էլեկտրոնային համակարգն արդիականացված է	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2023թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ

			և կիրարկվում է: Էլեկտրոնային համակարգերի 90%-ը և ավելին համապատասխանեցված են գործող իրավական ակտերի պահանջներին: Արտաքին տնտեսական գործունեության իրականացման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթերի 90%-ը թվայնացված է: Արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների 80%-ը և ավելին օգտվում են ներդրված էլեկտրոնային համակարգերից:			
6	Միջազգային համագործակցության ամրապնդում	6.1 Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին ՀՀ անդամակցության շրջանակներում տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտների ներդրում	<p>ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում:</p> <p>Արդյունքում ձեռք է բերվել առնվազն «մեծամասամբ համապատասխանում է» փորձագիտական գնահատման վարկանիշ:</p>	Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2021թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ (շարունակական)	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (10.0 մլն դրամ)
		6.2 ՏՀՀԿ-ի Միասնական հաշվետվողական ստանդարտի (Common Reporting Standard - CRS) ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում	ՀՀ-ում հարկման նպատակով ինքնաշխատ կամ ինքնաբերական եղանակով տեղեկությունների համակարգի ներդրման ճանապարհային քարտեզի մշակում:	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	2022թ. ապրիլի 3-րդ տասնօրյակ	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (10.0 մլն դրամ)

		<p>6.3 «Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի՝ հարկային մարմնի գործառույթներին առնչվող ստանդարտների կիրառումն ապահովող աշխատանքների իրականացում</p>	<p>Արդյունքում ճանապարհային քարտեզը մշակված է:</p> <p>ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարում:</p> <p>Արդյունքում ստանդարտները ներդրված են:</p> <p>2023թ. -ին համապատասխան ստանդարտների ներդրմանն ուղղված իրավական ակտերն արդեն իսկ ընդունված են և իրավական ակտերում անհրաժեշտության դեպքում հնարավոր է կատարվեն փոփոխություններ և լրացումներ՝ իրավական ակտերը միջազգային ստանդարտների մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով:</p> <p>2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտած «Հարկվող բազայի քայքայումը և շահույթի տեղաշարժ» ծրագրի 13-րդ և 14-րդ գործողությունների իրագործումն ապահովող թվով 2 իրավական ակտ (ՀՀ ՊԵԿ նախագահի 09.09.2022թ. ընդունված «Երկրների միջև փոխանակվող հաշվետվության ձևն ու լրացման կարգը սահմանելու մասին» թիվ 939-Լ հրամանը և «Փոխհամաձայնեցման ընթացակարգի միջոցով</p>		<p>2021-2025թթ. (շարունակական)</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (10.0 մլն դրամ)</p>
--	--	---	--	--	------------------------------------	--

			<p>հարկային հարցերով վեճերի լուծման կարգը և ժամկետները սահմանելու մասին»</p> <p>Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումը), որոնցով բարձրացվում է հարկային վարչարարության իրականացման և հարկային մարմինների միջև վեճերի լուծման արդյունավետության մակարդակը:</p> <p>2025թ. արդեն իսկ ընդունված իրավական ակտերն արդյունավետ կիրառվում են:</p>			
		<p>6.4 Արևելյան գործընկերության շրջանակում փաստաթղթերի միջսահմանային էլեկտրոնային առաքման համակարգերի հետ ինտեգրում/ տվյալների փոխանակում</p>	<p>Էլեկտրոնային առաքման համակարգերից մեկին կամ մի քանիսին միանալու միջոցով արտերկրյա կազմակերպություններից էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր ստանալու և ՀՀ-ում գրանցված կազմակերպությունների կողմից արտերկիր հաշվարկային փաստաթղթեր ուղարկելու հնարավորության ապահովում:</p> <p>Արդյունքում իրականացված է միացում մեկ կամ մի քանի էլեկտրոնային առաքման համակարգերին: Առկա է արտերկրյա կազմակերպություններից էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր ստանալու և ՀՀ-ում գրանցված</p>	<p>Վարչապետի աշխատակազմ</p> <p>«ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ)</p>	<p>2022 թ. հունիսի երրորդ տասնօրյակ</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ (100.0 մլն դրամ)</p>

			կազմակերպությունների կողմից արտերկիր հաշվարկային փաստաթղթեր ուղարկելու հնարավորությունը:		
--	--	--	--	--	--

Քաղաքաշինության կոմիտե						
NN	Նպատակ	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունք	Համակատարող	Ժամկետ	Ֆինանսավորման աղբյուր և կանխատեսվող չափ
1	2	3	4	5	6	7
1	Տարածքային մակարդակում պետական քաղաքաշինական իրագործման համար անհրաժեշտ հիմքերի ստեղծում	1.1 «Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերի մշակում» 2017-2024 թվականների ծրագրի շրջանակներում՝ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակում	Մշակված միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական փաստաթղթեր: <b>2021թ. թվով 20 փաստաթուղթ՝</b> - ՀՀ Վայոց ձոր-1,2,3,4,5,6, (թվով 45 բնակավայր), - ՀՀ Արմավիր-1,2,3,4,5,6,7,8,9 (թվով 97 բնակավայր), - ՀՀ Արագածոտն-2, 5, 10, 11, (թվով 40 բնակավայր), - ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնք (թվով 11 բնակավայր): <b>2022թ. թվով 25 փաստաթուղթ՝</b> - ՀՀ Արագածոտն-1, 3, 4, 6, 7, 8, 9 (թվով 74 բնակավայր), - ՀՀ Շիրակ-1,2,4,5,6,7 (թվով 84 բնակավայր), - ՀՀ Գեղարքունիք-3,4,8 (թվով 41 բնակավայր), - ՀՀ Շիրակ-3,9,10,11 (թվով 34 բնակավայր), մեկնարկ, - ՀՀ Գեղարքունիք-1,2,5,6,7 (թվով 51 բնակավայր):	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Ճարտարապետների պալատ (համաձայնությամբ)	2021թ. – 01.07.2024թ.	Պետական բյուջե 2021թ.՝ 199.936,0 հազ. դրամ, 2022թ.՝ 453.084,0 հազ. դրամ (պայմանագրով նախատեսվել է՝ 276.950,0 հազ. դրամ), 2023թ.՝ 502.906,2 հազ. դրամ (պայմանագրով նախատեսվել է՝ 374.608,0 հազ. դրամ), 2024թ.՝ 298.884,8 հազ. դրամ



		<p><b>2023-2024թթ. թվով 23 փաստաթուղթ՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Լոռի-1,2,3,4,5,6,7,8,9 (թվով 128 բնակավայր),</li> <li>- ՀՀ Կոտայք- 1,2,3,4,5,6,7,8,9,10 (թվով 69 բնակավայր),</li> <li>- ՀՀ Շիրակ-3,9,10,11 (թվով 34 բնակավայր), ավարտ:</li> </ul> <p>2024 թվականին նախատեսված է ավարտել ծրագիրը՝ ՀՀ համայնքներն ապահովելով տարածական պլանավորման փաստաթղթերով:</p>			
	<p>1.2 «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության նախագծի մշակում</p>	<p>Սևանա լճի ռեկրեացիոն գոտում ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Ճարտարապետների պալատ (համաձայնությամբ)</p> <p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>«Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (համաձայնությամբ)</p>	<p>2021թ. - 2022թ. 1-ին կիսամյակի ավարտ</p>	<p>Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում (անհրաժեշտ 43.000,0 հազ. դրամը հատկացվել է 2020թ.)</p>

		<p>1.3 Սահմանամերձ համայնքներում քաղաքաշինական գործունեությանն աջակցություն</p>	<p>Միկրոռեզիդենցիալ փաստաթղթերի շրջանակներում հաստատված առաջարկությունների հիման վրա կառուցապատման ներդրումային ծրագրերի փաթեթների մշակման միջոցով սահմանամերձ համայնքների քաղաքաշինական հիմնախնդիրների լուծում, անվտանգ կենսամիջավայրի ապահովում, ժողովրդագրական ցուցանիշների բարելավում, որոնց ապահովման համար աճի բևեռների ձևավորմանը և համայնքների զարգացմանն ուղղված հայեցակարգերի առաջադրում.</p> <p><b>2021թ. մշակված թվով 4 միկրոծրագիր՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Արարատի մարզ՝ 2,</li> <li>- ՀՀ Սյունիքի մարզ՝ 1,</li> <li>- ՀՀ Արմավիրի մարզ՝ 1:</li> </ul> <p><b>2022թ. մշակված թվով 2 միկրոծրագիր՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնք՝ 1,</li> <li>- ՀՀ Արագածոտնի մարզ՝ 1:</li> </ul> <p><b>2023թ. մշակված թվով 2 միկրոծրագիր՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 1,</li> <li>- ՀՀ Շիրակի մարզի՝ 1:</li> </ul> <p><b>2024թ. մշակված թվով 3 միկրոծրագիր՝</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- ՀՀ Լոռու մարզի՝ 3:</li> </ul> <p><b>2025-2026թթ. ըստ Կառավարության կողմից առաջադրված խնդիրների</b></p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Մարզպետարաններ (բացառությամբ՝ Կոտայքի մարզպետարանի)</p>	<p>2021թ. - 2026թ. 1-ին եռամսյակ</p>	<p>Ֆինանսավորման չափը և աղբյուրները կճշտվեն ներդրումային փաթեթները Կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո</p>
--	--	---	---	---	--------------------------------------	---

		լուծմանն ուղղված առաջնահերթությունների:			
	1.4 ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի և գլխավոր նախագծի մշակում	Ազգային և տեղական մակարդակի փաստաթղթերի (տարաբնակեցման և տարածքային կազմակերպման, քաղաքաշինական մանրամասն գոտևորման) հաջորդական մշակման և դրա հիման վրա տարածական արդյունավետ պլանավորման միջոցով երկրի կայուն տարածական զարգացման ռազմավարության մշակում՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական գործոնները, ինժեներակրթական, ինժեներատրանսպորտային, բնական պայմանների ու պաշարների, էկոլոգիական իրավիճակի, մշակութային ժառանգության, աշխարհագրական ու տարածաշրջանային այլ առանձնահատկությունները	Վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կազմում ընդգրկված մարմիններ  Պաշտպանության նախարարություն	Գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում՝ 2024թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ,  Գլխավոր նախագծի մշակում՝ 2026թ. (շարունակական՝ մինչև 2027թ.)	Նախագծի առաջադրանքի մշակումը ֆինանսավորում չի պահանջվում  Պետական բյուջե: Նախագծի մշակման ֆինանսավորման չափը կհստակեցվի առաջադրանքը Կառավարության կողմից հավանության արժանանալուց հետո
	1.5 «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Տարածքի հատակագծման նախագծերի մշակման, փորձաքննության,	«Քաղաքաշինության մասին» օրենքում սահմանվում է «տարածքի հատակագծման նախագիծ» հասկացությունը: Տարածքի հատակագծման նախագիծը քաղաքաշինական կարգավորման առավել	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն	2021թ.-2022թ. նոյեմբեր	Ֆինանսավորում չի պահանջվում

		<p>համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>մանրամասն փաստաթուղթ է, որում ներառված են միջպետական կամ հանրապետական նշանակության ճանապարհներին հարող տարածքների, հատուկ կարգավորման գոտիների, կառուցապատված կամ նոր կառուցապատվող թաղամասերի քաղաքաշինական նորմերին համապատասխան հիմնական չափորոշիչներ, որոնք միևնույն ժամանակ նպաստում են տարածքի ներդրումային գրավչության որոշմանը</p>	<p>Ճարտարապետների պալատ (համաձայնությամբ)</p>		
		<p>1.6.1 «ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի տարածքային գլխավոր նախագծի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p> <p>1.6.2 ՀՀ վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն համակարգի</p>	<p>Առկա և բարելավվող ռեսուրսային պոտենցիալի համալիր գնահատում, դրանց հիման վրա զբոսաշրջային կայուն համակարգի փոխկապակցված ցանցի ձևավորում՝ ապահովելով ռեսուրսների խնայողական օգտագործումը, տարածքների ռեկրեացիոն տարողունակության գնահատումը, բնական էկոհամակարգերի գերբեռնման կանխումը, առկա ենթակառուցվածքի գնահատումը, բարեփոխման հատկազծային կազմակերպման միասնական ուրվագծի առաջադրումը:</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p>	<p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p> <p>2025 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում:</p>

	տարածքային գլխավոր նախագծի առաջադրանքի մշակում				
	1.7 «Հայաստանի բնակավայրերի պատմական կառուցապատման, ճարտարապետական և բնական ժառանգության վերականգնման, վերակառուցման և վերաօգտագործման քաղաքաշինական կանոնակարգերի մեթոդաբանությունը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի մշակում	Բնակավայրերի ձևավորված քաղաքաշինական միջավայրերի ճարտարապետական և բնական ժառանգության օբյեկտների նկատմամբ միջամտությունների չափորոշիչների և կարգավորիչների մշակված համակարգ և պահպանված քաղաքաշինական ժառանգություն	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	2024թ.-2025թ.	Ֆինանսավորում չի պահանջվում:
	1.8 Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում նոր բնակելի թաղամասի հիմնում	Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ բնակավայրում սահմանազատման հետևանքով իրենց բնակելի նշանակության գույքերի (այդ թվում՝ հողամասերի և օժանդակ շինությունների) տնօրինման հնարավորությունից զրկված ընտանիքների բնակարանային պայմանների ապահովում՝ թվով 13 առանձնատների կառուցմամբ: <b>2022թվական՝</b> առանձնատների կառուցում, <b>2023թվական՝</b> կոմունիկացիոն ենթակառուցվածքներ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Կադաստրի կոմիտե  Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2021թ.- 2023թ. 2-րդ եռամսյակ	Պետական բյուջե  Ծրագրի իրականացման շին. աշխատանքների կատարման (այդ թվում՝ տեխ. և հեղինակ. հսկ.) համար կնքված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է՝ 1.214.563,6 հազ. դրամ
	1.9.1 «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման	Մայրաքաղաքի համաչափ տարածական զարգացմանը զուգընթաց Երևանի փոքր	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)	2024թ. 1-ին եռամսյակ	Ֆինանսավորում չի պահանջվում

		մասին» օրենքի նախագծի ընդունում	կենտրոնի քաղաքաշինական գործունեության առանձնահատկությունների սահմանում, ճարտարապետական կերպարի ինքնության պահպանում, կառուցապատման գեղագիտական միջավայրի կատարելագործում, անվտանգ, գրավիչ և հարմարավետ կենսամիջավայրի կազմավորում:	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն  Կադաստրի կոմիտե		
2	Քաղաքաշինական թույլտվությունների գործընթացի ամբողջական իրականացում առցանց համակարգի միջոցով	2.1 Պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի (քաղաքաշինական կադաստրի) ներդրման ծրագրի իրագործում	Տեխնիկական և ծրագրային ապահովմամբ հանրապետության ողջ տարածքում պետական քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ստեղծման միջոցով գործառույթների զգալի մասն իրականացնել էլեկտրոնային միասնական համակարգով՝ օրենսդրական կարգավորման առաջարկների նախանշմամբ և վերջիններիս լուծման ուղղությունների ամրագրմամբ, քաղաքաշինական գործունեության օբյեկտների, տարածական պլանավորման, քաղաքաշինական նորմերի, սահմանափակումների, ինչպես նաև ինժեներաերկրաբանական, սեյսմիկ իրադրության, քաղաքաշինական գործունեության վրա ազդող այլ գործոնների վերաբերյալ համալիր և ստույգ տեղեկությունների ներառմամբ.	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Կադաստրի կոմիտե  Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ  Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին	2026թ.	Պետական բյուջե, ԵՄ դրամաշնորհներ  Անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը կճշտվի միջոցառման մշակման ժամանակ՝ համապատասխան հաշվարկ-հիմնավորումների հիման վրա

			<p>իրավական, նորմատիվատեխնիկական, ծրագրատեխնոլոգիական և մեթոդական միասնական հիմքի ապահովում և գործնական ներդրում. բազային և քաղաքաշինական երկրատեղեկատվական համակարգերի միասնականության և տվյալների փոխանակման համակարգի ստեղծում</p>			
3	<p>Քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման փուլերի կրճատում և թույլտվություններ պահանջող գործունեության շրջանակի բովանդակային իմաստով վերանայում</p>	<p>3.1 «ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում Վարչապետի աշխատակազմ</p>	<p>Կառուցապատման սահմանված ընթացակարգերի վերանայում, ընթացակարգերին մասնակից բոլոր մարմինների և կազմակերպությունների հետ ինտեգրված միասնական էլեկտրոնային «e-permits» համակարգի միջոցով ընթացակարգերի կազմակերպում: Համակարգը թույլ կտա նաև իրականացնել գործընթացների մոնիթորինգը և այն կձառայի որպես շինարարության բնագավառի միասնական տեղեկատվական շտեմարան</p>	<p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածք- ների նախարարություն  Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն  Էկոնոմիկայի նախարարություն  Կադաստրի կոմիտե  Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ  Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին</p>	<p>2022թ. սեպտեմբերի 3- րդ տասնօրյակ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվում</p>

